


# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Բ. ԳԻՐՔ

Ա. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

(Ի Պէտս Ուսուցչաց)



Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Ց

ՆՈՒՊԱՐ ՄՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պ Է Ց Ր Ո Ւ Ք

1964

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կ'ապրիմք դարու մը մէջ, ուր բարոյական սկզբունքները հիմնովին սարսած են եւ բարութեան գործերը գրեթէ չբացած: Մարդիկ իրենց մոլար եւ վնասակար կենցաղավարքով դառնացուցած են կեանքը ու մարդկութիւնը կ'առաջնորդեն անստոյգ ապագայի մը:

Այս ահռելի ու ախտաւոր մթնոլորտին մէջ, ուր օրուան իր հոգերով եւ գոյատեւելիւ հօր կսմբով կը պայքարի սփիւռփի մէջ ցանուցիր հայ ժողովուրդը, ահաւասիկ կիրակնօրեայ դպրոցը կու գայ իր հնարաւոր միջոցներով ամուր կուսանի վրայ դնել մեր նոր սերունդը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ կիրակնօրեայ Դպրոցներու նըպատակն է Հայութիւնը լուսաւորել քրիստոնէական հաւատքով եւ արդարասիրութեամբ, ազգային հարազատ ոգիին գիտակցութեամբ եւ նախանձախնդրութեամբ:

Ճիշդ այս մտահոգութիւններէ մզուած, ահաւասիկ լոյս կ'ընծայենք ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ խորագրով դասագիրքերու շարքին Բ. Գիրքը, գոր պատրաստած է Նոր Մարաշի կիրակնօրեայ Դպրոցի ներքին տեսուչ Բարեշ. Նուպար Սրկ. Պէրպէրեան, որ իր տարիներու փորձառութեամբ եւ լուրջ աշխատանքով կրցած է իսկապէս մանկավարժական իմացումով գրքոյկ մը ընծայել կիրակնօրեայ դպրոցի մեր փոքրիկներուն համար:

Սոյն հրատարակութեան շարքը պիտի շարունակուի մինչեւ Ը. գիրք:

Վստահ ենք որ այս շարքը մեր ժողովուրդին բաջալերանքին պիտի արժանանայ եւ մեր ծնողները բարձր գնահատելով մեր գործը, իրենց գաւակները աներկբայ պիտի վստահին մեզի:

10 Հոկտ. 1964

Անթիլիսս

ԵԶՆԻԿ ՎՐԴ. ԲԱԼԱՅԵԱՆ

Վարիչ Տնօրէն Հ.Ե.Կ.Դ.Ի

Ա. ԴԱՍ

## ԵԶԵԿԻԱ ԵՒ ՍԵՆԵՔԵՐԻՍ

(Կ. Թագ. ժԸ., ժԹ.)

Երուսաղէմի մէջ կը նստէր Եզեկիա անուշով բարեպաշտ թագաւոր մը: Ան կը քայլէր Ասաուծոյ ճամբուն մէջ և նոյն տան կը ջանար որ իր ժողովուրդն ալ ապրէր Ասաուծոյ օրէնքներուն համեմատ: Ասաուած օրններ էր Եզեկիան իր հաւատարմութեան համար, ուստի ինչ բանի որ ձեռք գարնէր, յաջողութիւն կը գտնէր:

Այդ օրերուն Ասորեստանի մէջ երեւան եկաւ Սենեքերիմ անուշով չար թագաւոր մը, որ բազմաթիւ զօրքերու գլուխն անցած՝ սկսաւ յարձակիլ իրեն գրացի երկիրներու վրայ ու կըրաւել անոնց քաղաքները: Իր գրուած երկիրներուն մէջ շատ անգթութիւններ կը գործէր և ա՛ն ու սարսափ կը ձգէր ամէն կողմ:

Սենեքերիմ ուզեց նաեւ գրաւել Երուսաղէմը՝ ուստի դեսպաններ ղրկեց Եզեկիային որ քաղաքը իրեն յանձնէր: Դեսպանները Երուսաղէմի մօտ հանգիպում ունեցան Եզեկիայի իշխաններուն հետ ու անարգական խօսքեր ըրին Ասաուծոյ և Եզեկիայի դէմ:

Եզեկիա մեծ այժ մը չունէր Սենեքերիմի դէմ պատե-  
րազմելու համար. սակայն ան մեծ վստահութիւն ունէր Աս-  
տուծոյ զօրութեան վրայ. ուստի դեսպաններուն խօսքերը ի-  
մանալէ ետք իր հանդերձները պատուեց ու քուրձ հագնելով  
Տիրոջ տաճարը մտաւ: Հոն Աստուծոյ աղօթեց և աղաչեց որ  
զիրենք ազատէ անգութ Սենեքերիմի ձեռքէն: Նոյն ստեղծ իր  
պալատականներն ու տաճարի քանաններուն գլխաւորները Ե-  
սայի մարգարէին զրկեց և խնդրեց անկէ որ Աստուծոյ աղօթէ:

Ժամանակ մը ետք Սենեքերիմ նորէն ուղարկեց իր դես-  
պանները և անոնց ձեռքով նամակ մըն ալ զրկեց Եզեկիային,  
որուն մէջ Աստուծոյ դէմ նախատակաւ խօսքեր կային:

Եզեկիա երբ նամակը կարդաց, ուղղակի Աստուծոյ առ-  
ջը մտաւ ու Տիրոջ առջեւ նամակը բանալով աղօթեց և ըսաւ.

— Ո՛վ Տէր, աչքերդ բաց ու նայէ, և լսէ Սենեքերիմի  
բոլոր խօսքերը... Ո՛վ Տէր, Աստուած մեր, ազատէ մեզ անոր  
ձեռքէն, որպէսզի երկրի բոլոր թագաւորութիւնները գիտնան  
որ Տէրը միայն Դուն ես:

Աստուած լսեց Եզեկիայի աղօթքը և Եսայի մարգարէին  
բերնով ըսաւ.

— Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար ինծի  
ըրած աղօթքդ լսեցի: Ան այս քաղաքը պիտի չմանէ, և իր  
եկամ ճամբայէն հա պիտի դառնայ... Ես Տէրս պիտի պաշա-  
պանեմ այս քաղաքը...:

Այն գիշեր Տիրոջ հրեշտակը ելաւ և Ասորեստանի բա-  
նակին մէջէն 185.000 մարդ զարկաւ: Գոռոզ Սենեքերիմ իր  
զօրքերուն մէջ եղած կատարածը տեսնելով, կնքազլուխ եղաւ  
ու վերադարձաւ իր մայրաքաղաքը՝ Նինուէ: Հոն իր չաստու-  
ծոյն՝ Նեսրաքի ասնը մէջ երկրպագութիւն ընելու ստեղծ, իր  
երկու սրգիները՝ Ադրամելէք և Սարասար զինք սպաննեցին  
ու Հայաստան փախան:

### ԵՐԲԱՅԱՅՈՒԹԻՒՆ

Աստուած կը լսէ իրեն յաւատարմներուն աղօթքը, կը պահէ ու  
կը պաշտպանէ զանոնք. սակայն կը պատժէ բոլոր ամբարտաւանները  
որոնք կը յանդգնեն իր անուր անարգելի:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1.— Եզեկիա ի՞նչպիսի թագաւոր մըն էր:
- 2.— Սենեքերիմ ինչո՞ւ համար դեսպաններ զրկեց Եզեկիային:
- 3.— Եզեկիա Սենեքերիմի նամակը տանելով ո՞ւր տարաւ և ո՞-  
րո՞ւն առջեւ բացաւ զայն:
- 4.— Եզեկիա ի՞նչ խնդրեց Աստուծմէ:
- 5.— Աստուած Եսայի մարգարէին բերնով ի՞նչ պատասխանեց  
Եզեկիայի:
- 6.— Տիրոջ հրեշտակը Ասորեստանցիներու բանակէն քանի՞ հա-  
զար մարդ զարկաւ:
- 7.— Որո՞նք մեռցուցին Սենեքերիմը և ո՞ւր փախան:

### ԳՈՅ ՍՈՐՎԵՅՈՒՐ

«Տեր բոլոր զինք սրողները կը պահէ, սակայն բոլոր ամ-  
բարտաւանները կը կորսնցնէ»: Սաղմ. ձե՛ր. (ձե՛ն)\* 20:

## Բ. ԴԱՍ

# ՅՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԷԻ ՓԱՒՈՒՍԸ

(Յովն. Ա., Բ., Գ. 1-3)

Նինուէ մեծ քաղաք մըն էր, սրուն բնակիչները շատ  
չարացեր էին: Աստուած նախքան զանոնք պատժելը՝ ուզեց ա-  
պաշխարութեան հրաւիրել: Ուստի Յովնան մարգարէին ըսաւ.

— Ելի՛ր, Նինուէ քաղաքը գնա և հոն քարոզութիւն  
ըրէ, քանզի անոնց չարութիւնը շատցաւ:

Յովնան չուզեց Նինուէ երթալ, և Աստուծոյ ներսէն  
փախչելու համար թարսիս դացող նաւ մը առաւ ու հեռացաւ:

(\*) Փակագծի մէջ առնուած բիւերը Սուրբ Գրոց Ամերիկեան  
Բնկերութեան կողմէ տպուած աշխարհաբար Աստուածաւունջի Սաղ-  
մասց գիրքին յատուկ են:

Աստուած Յովնանը իր ճամբէն ետ կեցնելու համար ծովուն մէջ մեծ փոթորիկ մը հանեց և նաւը խորատակուելու մօտեցաւ: Նաւավարները վախցան ու ամէն մէկը սկսաւ իր սասուածոյն ազաղակել:

Այդ միջոցին Յովնան նաւուն խորշը իջած խորունկ քուն մը կը քաշէր: Նաւապետը իրեն մօտենալով ըսաւ.

— Ո՞վ խորունկ քնացող մարդ, ելի՛ր, դուն ալ աղօթէ ու ազաղակէ քու Աստուծոյդ. թերեւս Ան մեզ կը յիշէ ու չենք կորսուիր:

Նաւուն մէջ գանուողները զգացին թէ այդ արտակարգ փոթորիկը ներկաներէն մէկուն գործած մեղքին պատճառովը տեղի կ'ունենար: Ուստի իրարու ըսին.

— Եկէ՛ք, վիճակ ձգենք ու հասկնանք թէ այս շարիքը որո՞ւն պատճառով մեր վրան եկած է:

Երբ վիճակ ձգեցին, վիճակը Յովնանի ելաւ. Այն ասան անոր հարցուցին թէ ինք ո՞վ էր, ո՞ր ազգին կը պատկանէր, ուրկէ՞ կու գար և ի՞նչ էր իր յանցանքը:

Յովնան պատասխանեց.

— Ես կը պաշտեմ ծովն ու ցամաքը ստեղծող երկինքի Աստուծոյ, և Անոր ծառան եմ: Ես այս նաւը կ'եր կեմ որպէսզի Աստուծոյ երեսէն փախչիմ:

— Ինչո՞ւ համար այդ քանը ըրիր: Հիմա քեզի ի՞նչ ընենք որ ծովը մեզմէ դադարի, հարցուցին մարդիկը և իրենք ալ շատ վախցան քանի որ ծովը երթալով աւելի կը փոթորկէր:

— Ձիս վերցուցէք ու ջուրը նետեցէք, որպէսզի ծովը հանդարտի, քանզի ես գիտեմ որ այս մեծ փոթորիկը իմ պատճառովս ձեր վրան եկաւ, ըսաւ Յովնան:

Նաւավարները նախ համարձակեցան Յովնանը ծովուն մէջ նետել և ուղեցին նաւը դէպի ցամաք դարձնել. սակայն չյաջողեցան. ու տեսնելով որ փոթորիկին սասակութենէն իրենք ալ պիտի կորսուին, Աստուծոյ ազաղակեցին՝ և ըսին.

— Ով Տէր, կ'ազաչենք, այս մարդուն հագին համար չկորսուինք ու մեր վրայ անմեղ տրին մի դնէր, քանզի ով Տէր, դուն քու սեղանիդ պէս ըրիր:

Այս աղօթքէն վերջ վերցուցին Յովնանը ու ծովը նետեցին, որմէ ետք ծովը իր սասակութենէն դադարեցաւ:

Աստուած հրամայեց մեծ ձուկի մը որ Յովնանը կլլէ:

Յովնան երեք օր եւ երեք դիշեր կէտ ձուկի փորին մէջ մնաց: Հոն գլջայ իր ըրած անհնազանդութեան վրայ ու Աստուծոյ աղօթեց: Աստուած լսեց անոր աղօթքը եւ հրամայեց ձուկին որ Յովնանը ցամաքի վրայ փսխէ:

Յամաք ելլելէ ետք, Աստուած նորէն հրամայեց Յովնանին որ Նինուէ երթայ ու ապաշխարութիւն քարոզէ: Յովնան հնազանդեցաւ ու ճամբայ ելաւ:

### ԵՋՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ

1) Եյր որ Աստուած մեզ կանչէ իր գործին համար, պէտք չէ մերժենք Անոր հրաւերը, այլ սիրայօծար ընդունինք: Աստուծոյ կամքին հակառակ չենք կրնար շարժիլ: Ան իր զօրաւոր բազուկովը կրնայ մեզ ետ դարձնել մեր դիտաւարութիւններէն:

2) Եթէ յանցանք մը կամ մեղք մը գործելու ըլլանք, անմիջապէս Աստուծմէ բողոքին խնդրելու ենք, որպէսզի Ան մեզի ներէ:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Աստուած ինչո՞ւ համար Յովնանը Նինուէ զրկել կ'ուզէր:
- 2) Յովնան ի՞նչ ըրաւ Նինուէ չերթալու համար:
- 3) Ճամբորդութեան ատեն ծովուն մէջ ի՞նչ պատահեցաւ:
- 4) Փոթորիկի պահուն նաւավարները ի՞նչ ըրին:
- 5) Նայն միջոցին Յովնան ի՞նչ կ'ընէր:
- 6) Նաւապետը Յովնանի քով երթալով ի՞նչ ըսաւ:
- 7) Վիճակը որո՞ւն վրայ ելաւ:
- 8) Յովնանը ո՞ւր նետեցին:
- 9) Ծով նետուելէ ետք ի՞նչ պատահեցաւ Յովնանին:
- 10) Յովնան ի՞նչ ըրաւ կէտ ձուկի փորին մէջ:
- 11) Աստուած Յովնանի աղօթքը լսելով, ի՞նչ հրամայեց կէտ ձուկին:
- 12) Աստուած երկրորդ անգամ ի՞նչ հրամայեց Յովնանի:

Գ. ԴԱՍ

ՅՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԷԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ

Յովն. Գ. եւ Գ.

Յովնան մարգարէն Նինուէ երթալով սկսաւ քարոզել և ըսել.

— Ո՛վ մարդիկ, ձեր չարութեան համար Աստուած երեք օրէն պիտի կործանէ այս քաղաքը:

Նինուէի բնակիչները Յովնանի քարոզութիւնը լսելով զղջումի եկան ու մեծէն մինչեւ պզտիկը քարձեր հագան և ծոմապանակեցանք ապաշխարեցին:

Նինուէ թագաւորը այս բանը իմանալով իր օթուէն ելաւ, վրայէն պատմուեանը հանեց և ինքն ալ քարձ հագնելով մտիտի վրայ նստաւ: Ապա բախր քաղաքին մէջ մաւնեակի կանչել տաւ որպէսզի սեւէ մէկը ոչ հաց ուտէ և ոչ ալ ջուր խմէ. այլ՝ ամէն մարդ քարձ հագնելով Աստուծոյ ազդարհէ և իր չար ճամբաներէն դառնալով թողութիւն խնդրէ:

Աստուած Նինուէացոց զղջումն ու ապաշխարութիւնը տեսնելով, ներեց անոնց յանցանքները և ետ կեցաւ քաղաքը կործանելէ: Սակայն Յովնան զժգոն մտայ Աստուծոյ ողորմածութենէն: Ան թէեւ կը քարոզէր, բայց և այնպէս կ'ուզէր որ Աստուած երեք օրէն կործանէր Նինուէն: Աւստի իր ազօթքին մէջ ըսաւ.

— Ո՛վ, Տէր, երբ ես տակաւին իմ երկիրս էի, գիտէի թէ Դուն ողորմած, դթած, երկայնամիտ ու բազում ողորմ Աստուած ես. չարիքի համար կը զղջաս և այս մարդիկը չես պատժեր: Միթէ ասոր համար չէ՞ր որ ես նաը առնելով թարսիս փախչիլ ուզեցի, կ'աղաչեմ, հոգիս ինձմէ առ, քանզի մեռնիլս ապրելս աղէկ է:

— Միթէ այդպէս ընելովդ աղէ՞կ կ'ընես, ըսաւ Աստուած:

+++

Յովնան քաղաքէն դուրս ելլելով, անոր արեւելեան կողմը առգաւար մը շինեց ու նստաւ, տեսնելու համար թէ քաղաքին ի՞նչ պիտի ըլլար:

Աստուած տաղաւարին քով դդմենի մը բուսցուց որ մէկ գիշերուան մէջ մեծցաւ: Յովնան զովացաւ անոր շուքին տակ և ուրախացաւ:

Հետեւեալ առաւ Աստուած որդ մը հանեց որ ելլելով դդմենին զարկաւ ու չորցուց: Երբ արեւը ելաւ, Յովնան անոր տաքութենէն անհանգիստ եղաւ ու սիրաբ շատ նեղուեցաւ դըմենիին չորնալուն համար և նորէն իր մահը ուզեց:

Աստուած ըսաւ Յովնանի.

— Դուն որ այս դդմենիին չորնալուն և փճանալուն համար շատ կը ցաւիս և կ'ուզէիր զայն խնայել, որուն համար ոչ աշխատութիւն քաշեցիր և ոչ ալ զայն մեծցուցիր. հապա ես պիտի չխնայէի՞ Նինուէ քաղաքին, որուն մէջ հարիւր քսան հազարէ աւելի մարդիկ կան:

ԵՋՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ

Աստուած կը գրայ ու կ'ողորմի իր բոլոր արարածներուն եւ չ'ուզեր որ անոնք իրենց մեղքերուն մէջ կորսուելով դժոխք երթան:

Աստուած բոլոր մեղաւորներուն առիթ կու տայ որ դարձի գան, եթէ մեղաւորներ իրենց մեղքեր խօստովանելով ապաշխարեն, Աստուած կը ներէ ու կը փրկէ զանոնք:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1.— Յովնան Նինուէի մէջ ի՞նչ կը քարոզէր:
- 2.— Նինուէացիք Յովնանի քարոզութիւնը լսելով ի՞նչ ըրին:
- 3.— Նինուէի թագաւորը Յովնանի քարոզութիւնը իմանալէ ետք ի՞նչ ըրաւ:
- 4.— Աստուած Նինուէի բնակիչներուն ապաշխարանքը տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 5.— Յովնան մարգարէն ուրախացա՞ւ Նինուէի փրկութեան համար:
- 6.— Յովնան մարգարէն ի՞նչ ըսաւ Աստուծոյ և ո՞ւր գնաց նստելու:
- 7.— Յովնան իր տաղաւարին քով դդմենիի մը ծաղկիլը տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 8.— Երբ դդմենին չորցաւ, Յովնան ի՞նչ եղաւ արեւի տաքութենէն և ի՞նչ ըսաւ Աստուծոյ:
- 9.— Աստուած ի՞նչ պատասխանեց Յովնանի:

Դ. ԴԱՍ  
ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

(Մասք. ԻԱ. 28 - 32)

Մարդ մը այգի մը ունէր որուն մէջ բաւական դարձ կար աշխատելիք, ուստի իր գաւակներէն մէկուն քով երթալով ըսաւ.

— Որդեակ, այսօր այգի գնաւ և աշխատէ, քու ներկայաւթիւնդ շատ կարեւոր է:

Տղան մերժեց հօրը խնդրանքը և ըսաւ.

— Չեմ ուզեր երթալ:

Հայրը գնաց իր երկրորդ գաւակին քով և անոր ալ նոյն խնդրանքը ըրաւ.

— Սիրով կ'երթամ, հայրիկ, ըսաւ երկրորդ աղան, սակայն աշխատելու չգնաց:

Առաջին աղան թէեւ մերժեց իր հօրը խնդրանքը, սակայն յետոյ զզջաց իր ըրածին վրայ ու այգի գնաց և այդ օր աշխատեցաւ:

Յիսուս այս առակը խօսեցաւ Երուսաղէմի սամարիւն մէջ մեծ բազմութեան մը առջեւ:

**ԵՂՐԱԿԱՅՐՆԵՐԻՆ.**— Առաջին աղան կը նմանին այն անձերը, որոնք սկիզբը թէեւ Աստուծոյ հրաւերը մերժելով չարութեան հետեւած կ'ըլլան, սակայն յետոյ իրենց սխալին վրայ անդրադառնալով կը զզջան ու կ'ապաշխարեն:

Երկրորդ աղան կը նմանին այն անձերը, որոնք առ երես ինքզինքնին պատրաստակամ կը ցուցնեն Աստուծոյ ճամբուն մէջ քայելու, սակայն յետոյ կը հեռանան:

**ՀԱՐՅՈՒՄՆԵՐ**

- 1.— Հայրը իր երկու գաւակներուն ի՞նչ առաջարկեց:
- 2.— Առաջին որդին ի՞նչ պատասխանեց հօրը և յետոյ ի՞նչ ըրաւ:
- 3.— Երկրորդ որդին ի՞նչ պատասխանեց և յետոյ ի՞նչ ըրաւ:
- 4.— Որո՞նք կը նմանին առաջին գաւակին:
- 5.— Որո՞նք կը նմանին երկրորդ գաւակին:

**ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ.**— «Որդիներ, ձեր ճնողներու հնազանդ եղիք Տիրոջով: Եփես. Զ. 1:

Ե. ԴԱՍ

ԱՆՆԵՐՈՂ ԾԱՌԱՆ

(Մասք. ԺԸ. 23-35)

Թաղաւոր մը իր ծառաները քովը կանչեց եւ անոնցմէ հաշիւ պահանջեց: Ծառեր ներկայացան եւ իրենց հաշիւները յանձնեցին:

Թաղաւորին ներկայացող պաշտօնեաներուն մէջ գտնուեցաւ մարդ մը, որ չկրցաւ վճարել իր տասը հաղար տաղանդ պարտքը: Թաղաւորը հրամայեց որ այդ մարդուն ըրլոր ինչքերը ծախուին, նաեւ դինքը, իր կինը եւ գաւակները սրպէս դերի վաճառեն, սրպէսզի պարտքերը դոստուին: Ծառան այս բանը իմանալով Թաղաւորին օտքը ինկաւ, աղաչեց ու պաղատելով ըսաւ.

— Տէ՛ր, համբերութիւն ունեցիր, քիչ մը ժամանակ շնորհէ ինձի եւ ամբողջ պարտքս կը վճարեմ քեզի:

Թաղաւորը զթաց իր ծառային վրայ, արձակեց դայն եւ շնորհեց անոր ամբողջ պարտքը:

Այս ծառան օր մը իր ծառայակիցներէն մէկը գտաւ, որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր: Ծուտով անոր կոկորդէն բռնեց եւ սկսաւ դայն խեղդել ու ըսել.

— Պարտքդ վճարէ ինձի:

Խեղճ մարդը անոր աղաչեց եւ ըսաւ.

— Համբերէ, քիչ մը ժամանակ տուր ինձի ու կը վճարեմ պարտքս:

Սակայն ան չուզեց համբերել եւ իր ծառայակիցը բանտ նետել տուաւ:

Թաղաւորը երբ այս դէպքը իմացաւ, շատ բարկացաւ ու իր քով կանչել տուաւ իրեն տասը հաղար տաղանդ պարտք ունեցող ծառան եւ ըսաւ.

— Չար եւ անդուլթ ծառայ, քու տղաչանքիդ համար ես քու ըրլոր պարտքերդ քեզի շնորհեցի: Դուն ալ ողորմելու էիր քու ծառայակիցիդ: Արդ, քանի որ դուն այսքան անդուլթ եղար, պէտք է կրես արժանի պատիժդ:

Ու թագաւորը զայն յանձնեց դահլիճներուն մինչև որ վճարէր իր ամբողջ պարտքը:

**ՆԱԴԵՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Յիսուս իր այս առակովը մեզի հասկցնել կ'ուզէ որ Աստուած մեր աղաչանքներն ու պաղատանքները լսելով կը ներէ մեր մեղքերը. պայմանաւ որ մենք ալ մեր կարգին ներենք մեր ընկերներուն մեզի հանդէպ գործած յանցանքները: Եթէ մենք մեր ընկերներուն յանցանքները չներենք, Աստուած ալ մեր յանցանքները չի ներեր:

**ՀԱՄՅՈՒՄՆԵՐ**

- 1) Թագաւորը իր ծառաները ինչո՞ւ կ'անչեց:
- 2) Մատաներէն մէկը որքա՞ն պարտք ունէր:
- 3) Տասը հազար տաղանդ պարտք ունեցողին համար թագաւորը ի՞նչ հրամայեց:
- 4) Մատային աղաչանքը տեսնելով, թագաւորը ի՞նչ ըսաւ:
- 5) Նոյն ծառան իր ծառայակիցին հանդիպելով ի՞նչ ըրաւ:
- 6) Թագաւորը իր ծառային անգթութիւնը իմանալով ի՞նչ ըրաւ:

**ՊՈՅ ՍՈՐՎԵՑՈՒՄ**

«Վասնզի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ: Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չի ներեր ձեր յանցանքները»: Մատթ. Զ. 14-15:

Զ. Դ Ա Ս

**ԱՆՊՏՈՒՂ ԹՁԵՆԻՆ**

(Ղուկ. ԺԳ. 6-9)

Մարդ մը իր այգիին մէջ տնկուած թղենի մը ունէր եւ ամէն տարի կու գար անկէ պտուղ քաղելու յոյսով, սակայն անոր վրայ պտուղ չէր գտներ: Օր մը իր այգեպանը կանչելով ըսաւ.

- Ահա երեք տարի է որ կու գամ այդ թղենիին վրայ պտուղ փնտռելու ու չեմ գտներ. ա՛յ ատիկա կտրէ, քանի որ անպէտ ըլլալով գետինը կը ծածկէ:

Բայց այգեպանը ըսաւ իր տիրոջ.

- Տէր, տարի մը եւս սպասէ, որպէսզի անոր բոլորտիքը բրեւ ու պարարտացուցիչ աղբերով անոր հողը զորացնեմ: Թերեւս յաջորդ տարի պտուղ տայ: Իսկ եթէ աշխատանքս ապարդիւն անցնի, այն ատեն կտրել տուր զայն:

• • •

Յիսուս այս առակը խօսեցաւ ցոյց տալու համար թէ իւրա-իւրաքանչիւր անհատ եւ իւրաքանչիւր աղք. նման է թղենիի մը որ պարտաւոր է բարի պտուղ տալու: Ինչպէս որ անպտուղ թղենիները կը կտրուին ու կրակը կը նետուին, այնպէս ալ Աստուծմէ հեռու ապրող եւ մեղք գործող մարդիկ իրենց գործած չարութիւններուն համար դժոխքի կրակին մէջ պիտի նետուին յաւիտենապէս տանջուելու համար:

Աստուած յաճախ երկար առիթներ կուտայ մեղաւորներուն, որպէսզի իրենց չարութենէն հեռու կենան եւ զղջալով ապաշխարեն: Ով որ այդ առիթէն կ'օգտուի ու Աստուծոյ կը դառնայ, կը փրկուի իր մեղքերէն. սակայն ով որ իր չարութիւններէն ու մեղքերէն ետ դառնալով Աստուծմէ ներում չի խնդրեր ու մաքուր կեանք մը չ'ապրի, կը կորսնցնէ իր հոգին:

**ՆԱԴԵՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Կիրակնօրեայ դպրոցի իւրաքանչիւր աշակերտ աշխատելու է որ պտղատու ծառ մը դառնայ: Պտղատու անձի մը յատկութիւն-

ներն են.— Աստուածպաշտութիւն, աղօթասիրութիւն, բնկերասիրութիւն, գրասիրութիւն, ողորմածութիւն, բարեգործութիւն, ծառայասիրութիւն, աշխատասիրութիւն, ներշնչութիւն, հաշտաբարութիւն եւ ասոնց նման բարի եւ առաքինի գործեր:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Մարդ մը իր այգիին մէջ ի՞նչ տեսակ ծառ մը ունէր:
- 2) Ամէն տարի ծառին վրայէն ի՞նչ կը փնտռէր եւ չէր դնէր:
- 3) Օր մը իր այգեպանին ի՞նչ ըսաւ:
- 4) Այգեպանը ի՞նչ խնդրեց իր տիրոջմէն:
- 5) Ի՞նչ տեսակ գործեր կատարելով բարի պատուներ տուած կ'ըլլանք:

կ'ըլլանք:

- 6) Անպատու ծառերը ի՞նչ կ'ընեն եւ ո՞ւր կը նետեն:
- 7) Բարի պատու չտուող մարդիկ մեռնելէ ետք ո՞ւր պիտի նետուին:

### ՊՈՅ ՍՈՒՂՆԵՑՈՒՄ

«Աւէն ծառ որ բարի պատու չի տար, կը կտրուի ու կրակը կը ձգուի»: Մատթ. է. 19:

Է- Դ Ա Ս

## ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ

(Ղուկ. Ժ. 30-35)

Հրեայ մարդ մը Երուսաղէմէն Երիբով կ'երթար: Ծամբան՝ ամայի տեղ մը հասնելուն, աւաղակներ վրան յորձակեցան եւ կողպակելէ վերջ վիրաւորեցին ու փախան: Պեղծ մարդը արիւնջուայ ու կիսամեռ վիճակի մէջ՝ ինկաւ ճամբուն վրայ:

Քիչ ետք հրեայ քահանայ մը անցաւ. այնտեղէն եւ վիրաւոր մարդուն օգնութեան ձեռք երկարելու տեղ, զայն տեսածին պէս ա-

րագ քայլերով հեռացաւ ու դնաց:

Ղեւտացի մըն ալ անցաւ նոյն տեղէն: (Ղեւտացիներ տաճարին ծառայութեան կը շուրջանէին եւ նոյն ատեն քահանաներուն օղնակները: ) Ան ալ անտեսեց իր վիրաւոր աղբակիցը ու անցաւ դնաց:

Սամարացի մարդ մըն ալ անցաւ նոյն ճամբէն (Սամարացիներ թշնամի էին հրեաներուն) եւ վիրաւոր մարդը տեսնելով՝ խղճաց: Քովը եկաւ, անոր վէրքերը լաթով փաթեց, վրան ձէթ եւ գինի թափեց եւ իր զրատին վրայ նստեցնելով, զայն տարաւ մօտակայ պանդոկ մը: Պանդոկապետին դրամ տուաւ եւ ըսաւ.

— Այս մարդուն յաւ հող տար, որպէսզի շուտով առողջանայ, իսկ եթէ տուած դրամդ տաւելի ծախս ընելու ըլլաս, վերադարձիս կը վճարեմ քեզի:

Վիրաւոր մարդը ժամանակ մը պանդոկին մէջ խնամուելէ ետք առողջացաւ եւ իր տունը դնաց:

### ԵՋՐԱԿԱՑՈՒՓՈՒՆ

Բարի Սամարացիին ըրած գրասիրական արարքը օրինակ պէտք է ըլլայ մեզի, որպէսզի մենք ալ մեր կարգին օգնենք մեր օժանդակութեան պէտք ունեցողներուն, նոյնիսկ եթէ անոնք մեր թշնամիներն ըլլան:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Աւաղակները ի՞նչ ըրին Երուսաղէմէ Երիբով դացող ճամբորդին:
- 2) Առաջին անգամ ո՞վ անցաւ վիրաւոր մարդուն քովէն եւ ի՞նչ ըրաւ:
- 3) Ղեւտացին վիրաւորը տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 4) Երրորդ անգամ ո՞վ անցաւ վիրաւորին քովէն:
- 5) Բարի Սամարացին ի՞նչ ըրաւ վիրաւոր մարդուն եւ ո՞ւր տարաւ զայն:
- 6) Բարի Սամարացին ի՞նչ ըսաւ պանդոկապետին:

ՊՈՅ ՍՈՒՂ ԵՅՈՒՐ

«Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս»: Մատթ. ԻԲ-39:

Ը. ԴԱՍ

Ա. ՅԱԿՈՒ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ

Ամէն դարու մէջ ապրած են սուրբ եւ բարի մարդիկ, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրած են Քրիստոսի եւ անոր Եկեղեցիին: Անոնք իրենց ժամանակը անցուցած են աղօթքով, եւ շարունակ քարոզած են որ մարդիկ մեղք չգործեն ու Աստուծոյ դառնան:

Նշանաւոր սուրբ մըն էր նաեւ Մծբին քաղաքի Հայրապետը՝ Յակոբ Եպիսկոպոս որ զօրաւոր հաւատքի տէր մէկն ըլլալով, մինչեւ իր մահը մաքուր կեանք մը ապրեցաւ՝ աղօթելով, քարոզելով եւ հրաշքներ գործելով: Ան երբ չար մարդոց հանդիպէր, կը խրատէր, եւ հարկ եղած պարագային ալ կը յանդիմանէր զանոնք: Իսկ բարի մարդիկը կը քաջալերէր ու կ'օրհնէր:

Սուրբ Յակոբ ծնունդով Ասորի էր. սակայն ապրած եւ գործած է նաեւ Հայաստանի մէջ: Աստուած անոր պարզեւած էր հրաշք գործելու զօրութիւն: Բազմաթիւ հիւանդներ թժշկուած են անոր աղօթքներովը:

Իր օրով կ'ապրէր Մանածիր՝ անունով չար իշխան մը որ շատ անպուժ էր: Սուրբ Յակոբ իշխանին քով դնաց, քարոզեց անոր եւ խրատեց որ իր շարութիւնները ձգէր եւ Աստուծոյ դառնար: Սակայն ան սուրբ Հայրապետին խրատը մտիկ ընելու տեղ՝ ծաղրեց զայն եւ ալ աւելի անդթութիւններ գործեց՝ մեղքնել տալով ուժ հարիւր անմեղ մարդիկ: Սուրբ Յակոբ իր ոտքին փոշին թօթուեց ու ելաւ անոր քաղաքէն. ապա բարձր լիւ մը ելլելով անիծեց Մանածիր իշխանը: Երկու օր ետք իշխանին եօթը զաւակներն ու կինը մեռան. իսկ անոնց մահէն ետք ինքն ալ չարաչար մահով մեռաւ:

Սուրբ Յակոբ քաղաքէ-քաղաք, զիւղէ-զիւղ պտրտելով քա-

րոզեց Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը, որպէսզի մարդիկ Աստուծոյ դառնան եւ իրենց մեղքերը խոտովանելով ապաշխարեն:

Կը պատմուի թէ Սուրբ Յակոբ փափաքած է Արարատ լեռը ելլել ու Նոյ Նահապետին տապանը տեսնել: Բաւական դժուարութիւններ յանձն առնելով իր մարդոց հետ ճամբայ կ'ելլէ դէպի լեռան դադաթը: Սուրբ Հայրապետը շարունակ կ'աղօթէ որ Աստուած իրենց շնորհէ տապանը տեսնել: Սր մը, քալելէն յոգնած եւ ուժասպառ եղած՝ կը քնանայ լեռան կատարին մօտ: Երազին մէջ Աստուծոյ հրեշտակը կուգայ եւ կ'ըսէ իրեն.

- Յակոբ, Յակոբ, Տէրը քու ազաւանքներդ ընդունեց եւ խնդրանքդ կատարեց. տապանի փայտերէն կտոր մը բերած եւ գըլխուդ տակ դրած եմ: Առ եւ վերադարձիր: Այլեւս մի աշխատիր վեր ելլել ու տապանը տեսնել: Աստուած այսպէս կամեցաւ:

Այս խօսքերուն վրայ Սուրբ Յակոբ կ'արթննայ եւ ուրախութեամբ ոտքի կ'ելլէ ու փառք տալով Աստուծոյ կ'երկրպագէ: Ծուռով կ'առնէ տապանէն փրցուած այդ փայտի կտորը եւ իր մարդոց հետ լեռնէն վար կ'իջնէ:

Նոյնպէս կը պատմուի որ Սուրբ Յակոբ Նիկիա քաղաքը կ'երթայ մեծ ժողովի մը մասնակցելու: Հոն ներկայ կ'ըլլայ նաեւ Կոստանդինոս կայսրը: Ժողովի միջոցին կայսեր աչքերուն կ'երեւի հրեշտակ մը որ Սուրբ Յակոբին քով կեցած անոր սպասաւորութիւն կ'ընէ: Կը զարմանայ կայսրը եւ կը հասկնայ թէ Յակոբ Հայրապետը Աստուծոյ ընտրեալ սուրբերէն մէկն է. ուստի մեծ յարգանքներ ու պատիւներ կ'ընծայէ անոր:

Սուրբ Յակոբ Հայրապետ երբ մեռաւ, հրեշտակները անոր հողին տարին երկինք՝ արգարներու օթեւանը: Ան այս աշխարհէն մեկնելէ վերջ երանելի սուրբերուն հետ շարունակ կ'օրհնէ զԱստուած եւ այս աշխարհի վրայ ապրող քրիստոնէաներուն համար կ'աղօթէ ու կը բարեխօսէ, որպէսզի անոնք ալ յաղթեն չար սատանային ու մեղքին:

Հայ եկեղեցին ամէն տարի Դեկտեմբեր ամսուան մէջ կը տօնէ Սուրբ Յակոբ Հայրապետին յիշատակը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետին առաքինի կեանքը օրինակ պետք է ծառայէ մեզի, որպէսզի մեմք ալ Աստուծոյ խօսքը սիրող, անոր պատուիրանները կատարող եւ եկեղեցւոյ ծառայող գաւակներ ըլլանք:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Ի՞նչ տեսակ կեանք մը ապրեցաւ Սուրբ Յակոբ:
- 2) Սուրբ Յակոբին աղօթքովը հիւանդները ի՞նչ կ'ըլլային:
- 3) Սուրբ Յակոբ ինչո՞ւ համար անիծեց Մանածիր՝ իշխանը:
- 4) Սուրբ Յակոբ ո՞ր լեռը ելաւ. ինչո՞ւ համար:
- 5) Երազին մէջ հրեշտակը ի՞նչ ըսաւ Սուրբ Յակոբին:
- 6) Կոստանդիանոս կայսրը Սուրբ Յակոբին քով գո՞ւյ տեսաւ:
- 7) Մեռնելէն վերջ հրեշտակները ո՞ր տարին Սուրբ Յակոբի հողին:

**ԳՈՑ ԾՈՐՎ ԵՑՈՒՐ**

«Արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ»: Սաղմ. ՃԺԱ. (ՃԺԲ.) 6:

**Թ. Դ Ա Ս**

**ԶԱՔԱՐԻԱՅԻ ԱԻՆՏՈՒՄԸ**

(Ղուկ. Ա. 5-25, 57-80)

Զաքարիա անունով բարի ու ստուռածափախ քահանայ մը կար: Ինք եւ իր կինը՝ Եղիսաբեթ սուրբ կեանք մը կ'ապրէին, սակայն զաւակ չունէին:

Օր մը երբ Զաքարիա Աստուծոյ տաճարին մէջ խնկարկուծիւն

կ'ընէր, յանկարծ Գարրիէլ հրեշտակը երեւցաւ իրեն: Զաքարիա շատ վախցաւ. բայց հրեշտակը ըսաւ իրեն.

– Մի՛ վախնար, Զաքարիա, քու աղօթքդ լսուեցաւ եւ քու կինդ՝ Եղիսաբեթ քեզի սրբի մը պիտի ծնի ու անոր անունը Յովհաննէս պիտի դնես: Ան Աստուծոյ առջեւ մեծ պիտի ըլլայ եւ զինի ու օղի պիտի չիմէ:

Զաքարիա չկրցաւ հաւատալ հրեշտակին խօսքերուն, քանի որ ինք եւ իր կինը ծերացեր էին: Ուստի հարցուց անոր.

– Ինչպէ՞ս դիտեամ ես այդ բանը:

Հրեշտակը ըսաւ իրեն.

– Քանի որ դուն իմ ըսած խօսքերուս չհաւատացիր, համր պիտի ըլլաս ու պիտի չկրնաս խօսիլ մինչեւ այն օրը որ այս ըսածներս կատարուին:

Զաքարիա երբ տաճարէն դուրս ելաւ, սկսաւ նշանով խօսիլ մարդոց հետ, քանի որ համր եղած էր:

Յաջորդ տարին Աստուած Զաքարիային ու Եղիսաբեթին մանչ զաւակ մը պարգևեց: Երբ մանուկին անունը պիտի դրուէր, բոլոր ներկաները հօրը անունով Զաքարիա կ'ուզէին կոչել: Սակայն Եղիսաբեթ կ'ըսէր թէ Յովհաննէս պիտի կոչուի: Աչք ըրին Զաքարիային թէ ի՞նչ անունով կ'ուզէր կոչել իր զաւակը: Ան ալ տախտակ մը ուզեց եւ անոր վրայ զրեց ՅՈՎՀԱՆՆԷՍ: Իսկոյն Զաքարիայի բերանը բացուեցաւ եւ սկսաւ խօսիլ ու զԱստուած փառաւորել:

Յովհաննէս մեծցաւ Աստուծոյ իմաստութեամբ ու դարձաւ մեծ մարգարէ մը:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

Զաքարիա ու Եղիսաբեթ իրենց բարեպաշտութեամբ դարձած էին տիպար ընտանիք մը: Անոնք ստուռածպաշտութեամբ մեծցուցին Յովհաննէսը: Անոնց սուրբ կեանքը օրինակ պետք է ըլլայ մեր բոլորին որպէսզի մեմք ալ Աստուծոյ օրէնքներուն համեմատ ապրելով Տիրոջ օրհնութիւն ստանանք:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ինչպիսի՞ կեանք մը կ'ապրէր Չաքարիա քահանան:
- 2) Ինչ էր անունը Չաքարիայի կնոջ:
- 3) Ո՞վ երեցաւ Չաքարիայի տաճարին մէջ:
- 4) Ո՞ր հրեշտակը երեցաւ Չաքարիային:
- 5) Հրեշտակը ի՞նչ ըսաւ Չաքարիային:
- 6) Չաքարիա ինչո՞ւ համար համր դարձաւ:
- 7) Երբ մանուկին անունը պիտի դրուէր, ի՞նչ պատահեցաւ:
- 8) Յովհաննէս մեծնալով ի՞նչպիսի մէկը դարձաւ:

Ժ. Դ Ա Ս

### ՄԱՐԻԱՄԻ ԱԻԵՏՈՒՄԸ

(Ղուկ. Ա. 26 - 56)

Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ կը բնակէր Մարիամ անունով բարեպաշտ կոյս մը որ նշանուած էր Յովսէփ անունով արդար մարդու մը հետ:

Գարրիէլ հրեշտակը Չաքարիա քահանային յայտնուելէն վեց ամիս ետք Աստուծոյ կողմէ զրկուեցաւ Մարիամին եւ զայն ողջունելով ըսաւ.

- Ուրախ եղիր, Տէրը քեզի հետ է:

Մարիամ շփոթեցաւ. բայց հրեշտակը ըսաւ իրեն.

- Մի՛ վախնար, Մարիամ, Աստուծոյ առջեւ շնորհ դուար:

Իո՞ւն որդի մը պիտի ունենաս եւ անունը Յիսուս պիտի դնես: Ան Աստուծոյ Որդի պիտի կոչուի ու յափտեան պիտի թաղուուրէ:

Մարիամ խոնարհեցաւ եւ ըսաւ.

- Ես Տիրոջ աղախինն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինձի:

Այս տեսիլքէն ու աւետումէն ետք, Մարիամ իրեն ազգական՝ Չաքարիա քահանայի կնոջ՝ Եղիսարեթի քով գնաց որ կը բնակէր ուրիշ քաղաքի մը մէջ:

Եղիսարեթ Մարիամը տեսնելով ուրախացաւ եւ յանկարծ Սուրբ Հոգիէն ներշնչուելով մարգարէացաւ ու զԱստուած օրհնելով ըսաւ:

- Մարիամ, դուն կանանց մէջ օրհնեալ ես:

Մարիամ պատասխանեց անոր.

- Տէրը իմ անձս կը մեծցնէ եւ Հոգիս կը ցնծայ իմ փրկիչ Աստուծովս, վասնզի Ան իր աղախինին խոնարհութեանը նայեցաւ: Ասկէ ետք բոլոր ազգերը ինձի երանութիւն պիտի տան:

Այնուհետեւ Մարիամ երեք ամիս չափ մնաց Եղիսարեթին քով եւ ապա վերադարձաւ իր տունը:

### ԵՁԲԱՎԱՅՈՒԹԻՒՆ

Մարիամին առաքիճի եւ խոնարհ նկարագիրը պէտք է օրինակ ըլլայ բոլոր քրիստոնէայ աղջիկներուն: Աստուած անոր խոնարհութեանը նայելով մեծցուց ու բարձրացուց զայն, մայր ընելով իր Միածին Որդւոյն:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Գարրիէլ հրեշտակը Մարիամին զրկուելով ի՞նչ ըսաւ:
- 2) Մարիամ հրեշտակը տեսնելով ի՞նչ եղաւ:
- 3) Հրեշտակը Մարիամին շփոթութիւնը տեսնելով ի՞նչ ըսաւ:
- 4) Մարիամ որո՞ւն քով գնաց:
- 5) Եղիսարեթ Մարիամը տեսնելով ի՞նչ ըսաւ:
- 6) Մարիամ ի՞նչ պատասխանեց Եղիսարեթին
- 7) Մարիամ քանի՞ ամիս մնաց Եղիսարեթին քով:

### ԳՈՑ ՍՈՐՎ ԵՑՈՒՐ

«Քանզի ահա ասկէ ետք բոլոր ազգերը ինձի երանութիւն պիտի տան»: Ղուկ. Ա. 48:

# ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՄՈԳԵՐՈՒՆ ԳԱՆՈՒՍԸ (Մատթ. Բ.)

Գարբիէլ Նրեշտակին բերած աւետիսին համաձայն, Սուրբ Կոյս Մարիամ ծնաւ մանուկ Յիսուսը Բեթլեհէմի մէջ: Այդ զիշեր Բեթլեհէմի դաշտին վրայ Նրեշտակները հովիւներու աւետեցին աշխարհի Փրկիչըն ծնունդը եւ ցնծութեան տաղեր երգեցին:

Երբ Յիսուս Բեթլեհէմի մէջ ծնաւ, արեւելքէն երեք մուկեր Երուսաղէմ եկան ու ներկայացան Հերովդէս թագաւորին եւ ըսին.

— Ո՛ր է այն վայրը ուր Նրեաներու նոր թագաւոր մը ծնեւ է: Մենք արեւելքի մէջ անոր աստղը տեսանք, եւ եկած ենք Անոր երկրպագելու:

Հերովդէս թագաւոր այս լուրը առնելով, շատ խռովեցաւ, մտածեց որ նոր ծնած թագաւորը կրնար օր մը իր դռնը ձեռքէն խլել: Անմիջապէս քովը կանչեց Նրեաներու քահանայապետներն ու դպիրները եւ անոնց հարցուց թէ Քրիստոս ո՛ր պիտի ծնէր: Անոնք ալ Աստուածաշունչի մարդարէական դիրքերը քննելով յայտնեցին թէ Քրիստոս պիտի ծնէր Բեթլեհէմի մէջ:

Հերովդէս երբ նոր թագաւորին ծնած վայրը իմացաւ, ծածկաբար մոգերը կանչեց, ու աստղին երեւցած աստիճանը ստուգելէ վերջ ըսաւ անոնց.

— Բեթլեհէմ դացէք եւ ստոյգը իմացէք այն Մանուկին մասին, ու երբ գտնէք, ինձի իմացուցէք, որպէսզի ես ալ դամ ու երկրպագութիւն ընեմ:

Հերովդէսի նպատակն էր նոր ծնած մանուկ թագաւորը ձեռք անցընել ու սպաննել:

Երբ մոգերը Հերովդէսի քովէն ելան, նորէն տեսան այն աստղը զոր արեւելքի մէջ իրենց երեւցած էր: Աստղը իրենց առջեւէն դնաց ու կանգ առաւ Յիսուս Մանուկին եղած տեղին վրայ: Մոգերը մեծ ուրախութիւնով հետեւեցան աստղին ու ներս մտնելով Յիսուս Մանուկին առջեւ ինկան ու երկրպագութիւն ըրին: Ապա իրենց դան-

ձերը բանալով Յիսուս Մանուկին ընծայ տաին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռ: Իսկ զիշերը երազի մէջ Աստուծո՛վ հրաման տաին որ Հերովդէսի մօտ չերթան, այլ ուրիշ ճամբով վերադառնան իրենց երկիրը: Մոգերը կատարեցին Տիրոջ հրամանը:

Աստուծոյ Նրեշտակը երազի մէջ Յովսէփին ալ երեւցաւ ու ըսաւ.

— Ելի՛ր, առ մանուկը ու անոր մայրը եւ Եզիպտոս փախի՛ր: Այնտեղ կեցիր մինչեւ որ ես քեզի բռնեմ, սքովհետեւ Հերովդէս պիտի փնտռէ Մանուկը, որպէսզի կորսնցնէ:

Յովսէփ, Նրեշտակին պատուէրին համաձայն, զիշերով Եզիպտոս փախցուց Յիսուս Մանուկն ու անոր մայրը:

Հերովդէս երբ տեսաւ թէ մոգերէն խորուսեցաւ, աստիկ սըր-դողեցաւ ու ջարդել տուաւ Բեթլեհէմի մէջ գտնուող երկու տարեկանէն վար մանուկները, այն յոյսով որ Յիսուս Մանուկն ալ աստից մէջ գտնուելով պիտի մեռնէր: Ժամանակ մը վերջ, երբոր Հերովդէս մեռաւ, Տիրոջ Նրեշտակը երազի մէջ նորէն երեւցաւ Յովսէփին ու ըսաւ որ ետ դառնայ Իսրայէլի երկիրը:

Յովսէփ հնազանդեցաւ ու երթալով բնակեցաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ:

## ՆՁՐԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Երեք մագերու նման մեկի ալ ամէն Մուսուլման փնտռելու եմք Յիսուս Մանուկը մեր նուէրները տալու համար Անոր: Երբ մեր ունեցածէն ազատներու եւ կարօտեալներու բաժին հանեմք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի նուէր տուած կ'ըլլանք:

## ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Որո՞նք Յիսուս Մանուկին աստղը տեսան արեւելքի մէջ:
- 2) Երեք մոգերը ո՞ր թագաւորին քով դացին եւ ի՞նչ հարցուցին անոր:
- 3) Հերովդէս մանուկ թագաւորին ծնունդը իմանալով ի՞նչ եղաւ:
- 4) Յիսուս ո՞ր քաղաքին մէջ ծնած էր:

- 5) Հերովդէս ի՞նչ պատուիրեց մոզերուն:
- 6) Ասողը մոզերուն առջեւէն երթալով ո՞ւր կ'եցաւ:
- 7) Մոզերը Յիսուս Մանուկին ի՞նչ տեսակ նուէրներ բերին:
- 8) Մոզերը երազի մէջ Աստուծո՞ւմէ ի՞նչ հրաման առին:
- 9) Հերովդէս ի՞նչ ընել տուաւ Բեթլէհէմի մանուկները:
- 10) Յովսէփ ո՞ւր փախցուց Յիսուս Մանուկն ու անոր մայրը:

**ԳՈՑ ՍՈՒՂԵՑՈՒՄ**

«Մնաւ նոր արքայ, ի Բեթղեհէմ ֆաղափի, արդիւ մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:»:

«Շարական»

ԺԲ. Դ Ա Ս

**ՅԻՍՈՒՍ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ**

(Դուկ. Բ. 41 - 52)

Յիսուս երբ տասներկու տարեկան էր, իր ծնողքը Զատիկի տօնին առիթով Երուսաղէմ գացին՝ զինքն ալ իրենց հետ տանելով: Հին ատեն մարդիկ մէկ քաղաքէ ուրիշ քաղաք մը երթալու համար պարտաւոր էին քալել, կամ էլով ու ջորիով ճամբորդել: Երուսաղէմ երթալու ատեն ազգականներ, դրացիներ ու բարեկամներ խումբով կը ճամբորդէին: Բարեպաշտ մարդիկ ճամբորդութեան միջոցին սաղմոսներ կ'երգէին ու աղօթքներ կը մրմնջէին:

Տօնական օրերը վերջանալէ ետք, բոլոր ուխտաւորները վերադարձան իրենց տեղերը: Յիսուսի ծնողքն ալ ճամբայ ելան դէպի Նազարէթ՝ իրենց քաղաքը: Երբ մէկ օրուան ճամբայ կտրած էին, յանկարծ զրացին թէ Յիսուս բացակայ էր իրենց խումբէն: Մինչ այդ կը կարծէին թէ Ան ազգականներուն տղոց հետ կը քալէր: Աջ ու ձախ փնտռեցին, Յիսուսը դտնելու համար: Ի վերջոյ ճարահատ, վերադարձան Երուսաղէմ, հոն գտնելու յոյսով: Երեք օր ետք զԱյն դտան տաճարին մէջ որ նստած էր վարդապետներու հետ եւ անոնց

մտիկ կ'ընէր ու հարցումներ կ'ուղղէր: զԱյն մտիկ ընողները կը զարմանային անոր իմաստութեան ու պատասխաններուն վրայ:

Յովսէփ ու Մարիամ Յիսուսը վարդապետներուն հետ տեսնելով ապշեցան: Մայրը ըսաւ իրեն.

- Որդեակ, ինչո՞ւ համար մեզի այսպէս բիրտ. ահա քու հայրդ ու ես շատ վշտացած քեզ կը փնտռէինք:

Յիսուս պատասխանեց.

- Զիս ինչո՞ւ կը փնտռէիք. չէի՞ք գիտեր թէ ես պէտք է որ Զօրս տունը ըլլամ:

Յովսէփ եւ Մարիամ չհասկցան Յիսուսի խօսքերուն իմաստը: Յիսուս իր ծնողքին հետ զնայ Նազարէթ քաղաքը եւ միշտ հնազանդ էր անոնց: Ան կը զարգանար իմաստութիւնով ու հասակով եւ Աստուծո՞ւմէ ու մարդոցմէ շնորհք կը դտներ:

**ՅԵՐՈՒՍՏՈՒԹԻՒՆ**

Բոլոր քրիստոնեայ պատանիները ջանք ընելու են նմանելու պատանի Յիսուսին, որ հնազանդ էր իր ծնողքին:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Յիսուս քանի՞ տարեկան էր երբ զինք Երուսաղէմ տարին:
- 2) Ո՞ր տօնին ատեն Երուսաղէմ գացին:
- 3) Յովսէփ եւ Մարիամ ո՞ւր վերադարձան Յիսուսը փնտռելու համար:
- 4) Յիսուս տաճարին մէջ որո՞նց հետ կը խօսէր:
- 5) Մարիամ ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 6) Յիսուս ի՞նչ պատասխանեց մօրը:

**ԳՈՑ ՍՈՒՂԵՑՈՒՄ**

«Եւ Յիսուս կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, եւ Աստուծո՞ւմէ ու մարդոցմէ շնորհ գտնելով»: Դուկ. Բ. 52:

### ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Գ. 13 - 17)

Յովհաննէս Մկրտիչ Յորդանան գետին եղբւրքը կը քարոզէր ու կը մկրտէր ըսելով. «Ապաշխարեցէ՛ք, վասնզի երկինքի թագաւորութիւնը մօտեցած է»: Մարդիկ իրեն կու գային եւ իրենց մեղքերը խոստովանելով կ'ապաշխարէին ու կը մկրտուէին:

Յիսուս երեսուն տարեկանին Յովհաննէսի քով եկու եւ ուզեց անկէ մկրտուիլ: Յովհաննէս Մկրտիչ Սուրբ Հոգւոյն ազդեցութեամբ հասկեցաւ թէ Յիսուս Աստուծոյ Որդին է. ուստի ինքզինքը արժանի չտեսաւ զԱյն մկրտելու եւ ըսաւ.

- Ես պէտք է որ Քեզմէ մկրտուիմ, ու Դուն ինձի՞ կուգաս:

Յիսուս պատասխանեց անոր.

- Թող տուր հիմա, վասնզի այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարութիւնը կատարենք:

Յովհաննէս Յիսուսի խօսքին վրայ տեղի տուաւ եւ մկրտեց զԱյն: Երբ որ Յիսուս մկրտուելէ վերջ ջուրէն դուրս ելաւ, երկինք բացուեցաւ ու Սուրբ Հոգին ազանիի կերպարանքով վրան իջաւ եւ երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւանք եմ»:

### ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս իր մկրտութիւնովը սրբեց ջուրը եւ հաստատեց մկրտութեան սուրբ խորհուրդը: Մկրտութիւնը կը սրբէ մեր նախաօր՝ Աքաւէն մեզի փոխանցուած մեղքը եւ մեզ կը դարձնէ Աստուծոյ որդեգիր ու եկեղեցւոյ անդամ: Ով որ չմկրտուի, չի կրնար մտնել երկինքի արքայութիւնը: Մկրտութիւնը կը կազուի նաեւ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԻ:

### ՀԱՐՏՈՒՄՆԵՐ

- 1) Յովհաննէս Մկրտիչ ի՞նչ կ'ընէր Յորդանան գետին եղբւրքը:
- 2) Յիսուս Յորդանան գալով ի՞նչ առաջարկեց Յովհաննէսին:
- 3) Յովհաննէս ի՞նչ պատասխանեց Յիսուսի:
- 4) Երբ որ Յիսուս ջուրէն ելաւ, ի՞նչ պատահեցաւ:
- 5) Սուրբ Հոգին ի՞նչ կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ:
- 6) Յիսուս քանի՞ տարեկանին մկրտուեցաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

«Ատիկա է իմ սիրելի Որդիս, որու հաւանք եմ»: Մատթ. Գ. 17:

### ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱԾՔԸ

(Յովհ. Բ. 1-11)

Գալիլիոյ Կանա քաղաքին մէջ հարսնիք մը կար, որուն հրաւիրուած էր Յիսուս իր աշակերտներով: Յիսուսի մայրը՝ Մարիամ ալ հոն կը գտնուէր:

Հարսանեկան սովորութիւններէն մէկն էր հրաւիրեալներուն գինի հրամցնել: Մինչ ամէն ոք ուրախութեան մէջ էր, յանկարծ հարսնիքին տէրերը նկատեցին որ գինին պակսելու վրայ է եւ ամօթով պիտի մնան բազմութեան առջեւ:

Մարիամ մօտեցաւ Յիսուսին եւ ըսաւ.

- Գինի չունին, բան մը ըրէ:

Յիսուս պատասխանեց իր մօրը.

- Ով կին, դուն ինձի հետ ի՞նչ բան ունիս, իմ ժամանակս դեռ հասած չէ:

Մարիամ գիտնալով որ Յիսուս իր խնդրանքը չէր մերժեր, ըսաւ սպասաւորներուն.

- Ձեզի ինչ որ ըսէ, ըրէք:

Հարսնետան մէջ վեց հատ քարէ կարասներ կային, որոնց մէջ ջուր կը դրուէր: Յիսուս սպասաւորներուն ըսաւ.

- Այս կարասները ջուրով լեցուցէք:

Ապաստւորները կատարեցին հրամանը: Յիսուս կարասներուն մէջ լեցուած ջուրը գինիի փոխակերպելով պատուիրեց սպասուորներուն որ սեղանապետին տանին զայն, որպէսզի ժողովուրդին հրամայէ:

Սեղանապետը նոր եկող գինիին համին նայելով զարմացաւ: Ընտիր գինի մը բերուած էր իր առջեւ: Սակայն ուրկէ ըլլաւ չէր գիտեր: Ուստի փեսային քով երթալով ըսաւ.

- Ամէն մարդ ազէկ գինին առաջ կը հրամայէ, ու երբ մարդիկ խմած կ'ըլլան, այն ատեն ստորնազոյնը մէջտեղ կը հանէ. սակայն դուն ընտիր գինին մինչեւ հիմա պահեցիր:

Փեսան ալ զարմացաւ թէ ուրկէ՞ բերուած կրնար ըլլալ այս ընտիր գինին: Սակայն շիջ ետքը բոլորին յայտնի եղաւ թէ Յիսուս հրաշքով ջուրը գինիի փոխակերպած էր:

Յիսուս առաջին անգամ այս հրաշքը կատարեց եւ իր փառքը յայտնեց, ու իր աշակերտները հաւատացին իրեն:

### ՆՁՐԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս իր մօրը խնդրանքը չմերժեց եւ ընթացք տուաւ անոր փափաքին: Մենք ալ մեր մայրերուն բոլոր փափաքները կատարելու ենք:

Թէեւ Յիսուսի հրաշք գործելու ժամը չէր հասած, սակայն Ան իր մօրը բարեխօսութեան ու խնդրանքին համար հրաշքով մը ջուրը գինիի փոխեց: Մարիամ Աստուածածին հիմա եւս երկինքի մէջ անդադար կ'ազօթէ ու կը բարեխօսէ մեզի համար, որպէսզի յաղթենք սատանային ու մեղքին եւ արժանի ըլլանք երկինքի արքայութեան:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս եւ իր աշակերտները ո՞ւր հրաւիրուած էին:
- 2) Հարսնիքի ժամանակ ի՞նչ պահանջաւ:
- 3) Մարիամ որո՞ւն քով գնաց եւ ի՞նչ ըսաւ:
- 4) Յիսուս ի՞նչ պատասխանեց իր մօրը:

5) Յիսուս ի՞նչ հրամայեց սպասուորներուն եւ ի՞նչ ըրաւ ջուրը:

6) Սեղանապետը նոր գինիին համը առնելով ի՞նչ ըսաւ. փեսային:

ԺԵ. Դ Ա Ս

## ՉՐԱԾԱԼԻ ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ

(Ղուկ. Ե. 1-11)

Յիսուս Գեննեսարեթի ծովափին (Գալիլիոյ ծով) քով կեցեր էր: Մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ իր շուրջը Աստուծոյ խօսքը լսելու համար:

Մովակին քով կեցեր էին երկու նաւակներ եւ ձկնորսները անոնց մէջէն ելած ուռկանները կը լուսային: Ձկնորսներուն մէջ կը գտնուէին՝ Սիմոն-Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս առաքեալները, որոնք թէեւ որպէս աշակերտ կանչուած էին Յիսուսի կողմէ, բայց տակաւին ձկնորսութեամբ ալ կը զբաղէին:

Յիսուս Սիմոնին նաւակը մտաւ եւ խնդրեց անկէ որ ցամաքէն շիջ մը ծովուն մէջ տանի: Սիմոն իսկոյն կատարեց անոր խնդրանքը:

Յիսուս նաւակին մէջ նստաւ եւ սկսաւ քարոզել ծովեզերք հաւաքուած բազմութեան ու անոնց սորվեցուց Աստուծոյ խօսքը:

Երբ քարոզութիւնը վերջացաւ, Յիսուս ըսաւ Սիմոնին.

- Նաւը առաջ տար: Ղէպի խորերը փայտէք եւ ձեր ուռկանները նետեցէք ձուկ որսալու համար:

- Վարդապետ, ըսաւ Սիմոն, բոլոր գիշերը աշխատեցանք ուրան մը չըրանեցինք, բայց քու խօսքիդ համար ուռկանը ձգեմ:

Երբ որ ուռկանը ծով նետեցին, չափէն աւելի շատ ձուկեր հաւաքուեցան անոր մէջ, այնպէս որ ուռկանը սկսաւ պատուիլ: Սիմոն եւ իր մարդիկը կանչեցին միւս նաւուն մէջ գտնուող իրենց ընկերները որպէսզի օգնութեան համին:

Միւս նաւն ալ մօտեցաւ իրենց ու բոլորը միասին ուռկանը

վեր քաշեցին եւ երկու նաւերն ալ ձուկերով լեցուցին:

Սիմոն-Պետրոս այս հրաշքը տեսնելով շփոթեցաւ ու վախ-նալով Յիսուսի ծունկերուն ինկաւ եւ ըսաւ.

- Տէր, իմ քովէս մէկդի գնա, որովհետեւ ես մեղաւոր մարդ մըն եմ:

- Մի՛ վախնար, ըսաւ Յիսուս Սիմոնին, ասկէ ետեւ դուն մարդոց որսորդ պիտի ըլլաս:

Սիմոն, Յակոբոս եւ Յովհաննէս նաւերը ցամաք հանեցին ու անկէ վերջ տեւական Յիսուսի ետեւէն դացին:

### **ԵՋՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ**

Սիմոն-Պետրոս եւ միւս աշակերտները մարդու որսորդ եղան, այսինքն սատանայի ու մեղքի ճիրաններէն որսացին մեղաւոր մարդիկը եւ բերին Յիսուսի փարայիսը: Անոնց այդ գործը մեզի օրինակ պէտք է ըլլայ, որպէսզի մենք ալ մեր ընկերները երբ չար մամբու մէջ տեսնենք, ցանանք զանոնք մօտեցնել Աստուծոյ: Երբ ոեւէ մէկուն Աստուծոյ խօսքը խօսինք, Քրիստոսի համար որսորդութիւն ըրած կ'ըլլանք: Երբ եկեղեցի չյաճախող մեր ընկերները եկեղեցի ու կիրակնօրեայ դպրոց առաջնորդենք, զանոնք մտցուցած կ'ըլլանք Քրիստոսի փարայիսը:

### **ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Յիսուս ո՞ր ծովուն եկերքը կը կենար:
- 2) Յիսուս նաւակը մտնելով ի՞նչ ըսաւ Սիմոն-Պետրոսին:
- 3) Յիսուս իր քարոզը վերջացնելէ ետք ի՞նչ առաջարկեց Սիմոնին:
- 4) Սիմոն երբ ուռկանը ծովը ձգեց, ի՞նչ պատահեցաւ:
- 5) Սիմոն ձուկերուն հրաշքը տեսնելով, ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ Յիսուսին:
- 6) Յիսուս ի՞նչ պատասխանեց Սիմոն-Պետրոսին:
- 7) Ի՞նչ ըսել է մարդու որսորդ ըլլալ:

### **ՊՈՅ ՍՈՐՎԵՑՈՒՄ**

« Ասկէ ետեւ մարդոց որսորդ պիտի ըլլաս»: Դուկ. Ե. 10:

ԺԶ. Դ Ա Ս

## **ԳԱԼԻԼԻԱՑԻ ԲՈՐՈՏԻՆ ԲԺՅՎՈՒԹԻՒՆԸ**

(Մարկ. Ա. 40-45)

Մինչ Յիսուս Գալիլիոյ մէջ քարոզութիւններ կ'ընէր, ամէն կողմերէ մարդիկ իրենց հիւանդները կը բերէին իրեն առջեւ որպէս զի զանոնք բժշկէր: Բորոտ(\*) մարդ մըն ալ Յիսուսի համբաւը լսելով իրեն քով եկաւ ու երկրպագութիւն ընելով ըսաւ.

- Տէր, եթէ ուզես, կրնաս զիս մաքրել:

Յիսուս խղճալով՝ ձեռքը մարդուն երկնցուց եւ անոր դպչելով ըսաւ.

- Կ'ուզեմ, մաքրուէ:

Իսկոյն մարդուն բորոտութիւնը անցաւ եւ մաքրուեցաւ: Յիսուս զայն բժշկելէ ետք ըսաւ.

(\*) Հին ատեն բորոտութիւնը բաւական տարածուած հիւանդութիւն մըն էր Պաղեստինի եւ անոր շրջակայ երկիրներուն մէջ: Բորոտութենէ վարակուողին մօրթին վրայ ներմակ քեփերով վերք մը կ'ելէր եւ հետզհետէ տարածուելով ենթակային մարմինին զանազան մասերը կը փտտեցնէր: Բորոտութիւնը փոխանցիկ այլտ մը ըլլալուն եւ նոյն ատեն ալ գէշ հոտ մը ունենալուն պատճառով, ենթակաները ֆաղաֆներէ եւ գիւղերէ դուրս կը բռնուէին: Երբ հիւանդները իրենց սիրելիներէն հեռու, ամայի վայրերու մէջ կ'ապրէին:

Մովսիսական օրէնքին համաձայն բորոտութենէ մաքրուողը պարտաւոր էր՝ ֆահանային ներկայանալու եւ անկէ բնուելու: Երբ մաքրուած ըլլալը հաստատուէր, բժշկուողը Աստուծոյ տաճարին ընծայ կը տանէր ոչխար մը կամ տատրակ մը, ըստ իր նիւթական կարողութեան

- Զգոյշ կեցիր, մարդու բան չըսես, հապա զնա, դուն քեզ քահանային ցուցուր եւ տուր քու մաքրուելուդ ընծան:

Բայց բժշկուողը իր ուրախութենէն ամէն կողմ տարածեց Յիսուսի անունը:

### **ՆՁՐԱՆԱՑՈՒԹԻՒՆ**

Յիսուս ամենակարող Աստուածորդի բլլալով բոլոր հիւանդները կը բժշկէր: Ան կը բժշկէր մեղքերով վարակուած մարդոց սրտերն ալ ու կը մաքրէր զանոնք: Արդ, խնդրեմք Յիսուսէն որ մեզ ալ մեր մեղքերէն մաքրէ:

### **ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Բորոտ մարդը Յիսուսի առջեւ դալով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:
- 2) Յիսուս ի՞նչ ըսաւ եւ ի՞նչ ըրաւ բորոտին:
- 3) Յիսուս ի՞նչ պատուիրեց բորոտ մարդուն զայն բժշկելէ վերջ:
- 4) Մարդը բժշկուելէ ետք ի՞նչ ըրաւ իր ուրախութենէն:

ԺԵ. Դ Ա Ս

## **ՏԵՌԱՏԵՍ ԿՆՈՋ ԲԺՅՎՈՒԹԻՒՆԸ**

(Մարկ. Ե. 25-34)

Հիւանդ կին մը կար, որ տասներկու տարիէ ի վեր կը տառապէր արիւնահոսութենէ: Իր բոլոր ունեցածը ծախսեր էր բժիշկներու եւ դեղերու, սակայն որեւէ օգուտ մը չէր տեսած, ընդհակառակը՝ օրէ օր աւելի հիւծեր էր:

Օր մը, այս կինը Յիսուսի հրաշագործութիւնները իմանալով որոշեց անոր քով երթալ: Ճամբան ինքն իրեն կ'ըսէր. «Եթէ միայն Յիսուսի հանդերձներուն դպչիմ, պիտի բժշկուիմ»:

Մեծ բազմութիւն մը շրջապատած էր Յիսուսը: Ամէն կողմէ

հիւանդներ եւ կերպ-կերպ ցաւեր ունեցողներ կ'ուզէին Անոր մօտենալ բժշկուելու համար: Հիւանդ կինը բազմութեան մէջ մտաւ եւ սկսաւ կամաց-կամաց յառաջանալ: Ի վերջոյ, մեծ դժուարութեամբ կրցաւ հասնիլ Յիսուսի քով եւ հաւատքով դպաւ անոր հանդերձներուն: Հազիւ թէ այս բանը ըրաւ, իսկոյն զգաց թէ մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ իր վրան: Արիւնահոսութիւնը կեցաւ եւ ցաւերը դադրեցան:

Յիսուս զգաց թէ իրմէ զօրութիւն մը ելաւ, եւ իր շուրջը նայելով ըսաւ.

- Ո՞վ դպաւ իմ հանդերձներուս:

Աշակերտները ըսին.

- Վարդապետ, կը տեսնես որ բազմութիւնը քեզ կը նեղէ ու կը հրէ, եւ դեռ կը հարցնես թէ ո՞վ քեզի դպաւ: Անշուշտ թէ այսքան բազմութեան մէջ քեզի դպչողներ շատ կան:

- Սակայն այս անձը ինձի դպչելու ատեն իմացայ որ ինձմէ զօրութիւն մը ելաւ, պատասխանեց Յիսուս եւ իր բոլորտիքը նայեցաւ զայն դտնելու համար:

Բժշկուող կինը տեսաւ թէ իր արարքը անյայտ չմնաց: Ուստի մօտեցաւ եւ Յիսուսի առջեւ իյնալով պատմեց հիւանդութեան պատճառով իր կրած տառապանքը եւ բժշկուելու յոյսով անոր հանդերձներուն դպչիլը:

Յիսուս ըսաւ կնկան.

- Քաջալերուէ, աղջիկ, քու հաւատքդ քեզ բժշկեց. զնա խաղաղութեամբ ու բժշկուած եղիր տանջանքներէդ:

### **ՆՁՐԱՆԱՑՈՒԹԻՒՆ**

Հիւանդ կնոջ զօրաւոր հաւատքը օրինակ պէտք է ըլլայ մեզի: Մեմ ալ մեր խնդրանքները Աստուծոյ առջեւ բերելու ատեն հաւատքով աղօթելու ենք:

### **ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Հիւանդ կինը որո՞ւն քով զնաց բժշկուելու համար:
- 2) Կինը իր մտքէն ի՞նչ կ'ըսէր:

- 3) Կինը Յիսուսի մտենալով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ եղաւ :
- 4) Յիսուս ի՞նչ ըսաւ իր շուրջը դանուողներուն :
- 5) Աշակերտները ի՞նչ ըսին Յիսուսի :
- 6) Յիսուս ի՞նչ ըսաւ կնոջ :

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

« Փազալիբուէ, աղջիկ, քու հաւատոքդ քեզ բժշկեց. գնա խաղաղութեամբ »: Ղուկ. Ը. 48

ԺԸ. Դ Ա Ս

## ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐՈՒՆ ԲԺՅՎՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Թ. 27 - 31)

Յիսուսի կատարած հրաշքներուն լուրը ամէն կողմ տարածուած էր: Ան կոյրերուն աչքերը կը բանար, կողերը կը քաշկցնէր, բորոտները կը մաքրէր եւ ամէն տեսակ հիւանդութիւնները կը բժշկէր:

Կափառնայում քաղաքին մէջ երկու կոյրեր Յիսուսի անցնիլը իմանալով, Անոր ետեւէն ինկան ու «Ողորմէ՛ մեզի, Որդի Դաւթի», աղաղակելով եկան մինչեւ Յիսուսի բնակած տունը եւ աղաչեցին որ իրենց աչքերը բանայ: Յիսուս անոնց հարցուց.

– Կը հաւատա՞ք թէ կրնամ այս բանը ձեզի ընել:

– Այո, Տէր, պատասխանեցին կոյրերը:

Այն առին Յիսուս անոնց աչքերուն դպաւ եւ ըսաւ.

– Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի:

Իսկոյն երկու կոյրերուն աչքերը բացուեցան: Յիսուս սատարիկ պատուէր տուաւ անոնց եւ ըսաւ.

– Չգոյ՛ կեցէ՛ք, մէկը չիմանայ:

Բայց երկու կոյրերը իրենց աչքերը բացուելուն համար այնքան ուրախ եղան, որ չկրցան լուս կենալ, հատրտ ամէն կողմ խօսեցան Յիսուսի կատարած հրաշքին մասին եւ տարածեցին անոր համբաւը:

### ԵՋՐԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս ոգւրնած է եւ կը գրայ իրեն դիմող բոլոր թշուառներուն, պայմանաւ որ անոնք հաւատք ունենան: Աստուծով շնորհներ ստանալու առաջին պայմանը հաւատքն է:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Երկու կոյրերը Յիսուսի անցնիլը իմանալով ի՞նչ աղաղակեցին:
- 2) Երկու կոյրերը Յիսուսի ետեւէն մինչեւ ո՞րը գացին:
- 3) Յիսուս ի՞նչ հարցուց անոնց:
- 4) Յիսուս երկու կոյրերուն աչքերը բանալով ի՞նչ ըսաւ:
- 5) Յիսուս ի՞նչ պատուիրեց անոնց:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

« Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի »: Մատթ. Թ. 29:

ԺԹ. Դ Ա Ս

## ՅԻՍՈՒՍ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅԵՆ ԿՐ ՔԱԼԵ

(Մատթ. ԺԴ. 22 - 33)

Օր մը Յիսուս Գալիլիոյ ծովուն եզերքը քարոզութիւն եւ հրաշքներ կատարելէ վերջ, երեկոյեան պատուիրեց իր աշակերտներուն որ նաւը մտնեն ու ծովուն անդիի կողմը անցնին: Իսկ ինք ժողովուրդը արձակելէ ետք առանձին լեռը ելաւ աղօթք ընելու:

Աշակերտները սկսան նաւարկել, սակայն հովն ու փոթորիկը կը դանդաղեցնէին նաւուն ընթացքը: Կէս գիշերը անց էր, երբ Յիսուս իր աղօթքը վերջացուց եւ լեռնէն վար իջնելէ ետք սկսաւ ծովուն վրայէն քալել ու յառաջանալ դէպի նաւը: Աշակերտները դե-

չերուան այլ ուշ պահուն ծովուն վրայէն դէպի իրենց յառաջացող մէկը նշմարելով շատ վախցան եւ սկսան աղաղակել, խորհելով որ աչքի երևոյթ բան մըն է իրենց տեսածը: Յիսուս անոնց վախը տեսնելով ըսաւ.

- Քաջ եղէք, ես եմ, մի վախնաք:

Աշակերտներուն մէջէն Պետրոս ըսաւ Յիսուսի.

- Տէր, եթէ դուն ես, հրաման ըրէ ինձի որ քեզի զամ ջուրերու վրայէն:

- Եկուր, ըսաւ Յիսուս:

Պետրոս նաւէն իջաւ եւ ջուրերու վրայէն քալեց որպէսզի Յիսուսի քով երթար: Բայց հովը սաստիկ տեսնելով վախցաւ ու սկսաւ ընկզմիլ: Իսկոյն աղաղակեց եւ ըսաւ.

- Տէր, ազատէ զիս:

Յիսուս շուտով իր ձեռքը երկնցնելով բռնեց Պետրոսը եւ ըսաւ անոր.

- Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար:

Երբ Յիսուս նաւը ելաւ, հովը դադարեցաւ ու ծովը խաղաղեցաւ: Բոլոր անոնք որոնք նաւուն մէջ էին, այս բոլորը տեսնելով Յիսուսի քով եկան ու Անոր երկրպագութիւն ընելով ըսին.

- Իրաւցնէ Որդի Աստուծոյ ես դուն:

### **ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ**

Պետրոս երկմտելով ինկաւ ալիքներու մէջ եւ փչ մնաց որ ընկզմէր, եթէ Յիսուս օգնութեան չհասնէր: Մեմք ալ կեանքի մէջ յաճախ մեր թերահաւատութեան պատճառով մեզքի մէջ ընկզմելու վտանգին ենթակայ կ'ըլլանք: Ինչպէս որ Պետրոս Յիսուսը օգնութեան կանչեց, նայնպէս ալ մեմք երբ փորձութեան ու վտանգի առջեւ գտնուինք եւ կամ մեզքի մէջ իյնանք, մեզի օգնութեան կանչելու ենք Յիսուսը որպէսզի մեզ բռնէ ու ազատէ:

### **ՀԱՐՅՈՒՄՆԵՐ**

- 1) Յիսուս գիշերուան ուշ պահուն ուրկէ՞ կը քալէր:
- 2) Աշակերտները ինչո՞ւ վախցան:

- 3) Յիսուս իր աշակերտներուն վախը տեսնելով ի՞նչ ըսաւ:
- 4) Պետրոս ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 5) Պետրոս ինչո՞ւ համար չկրցաւ յառաջանալ ծովուն վրայէն:
- 6) Պետրոս ընկզմելու ատեն ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 7) Ո՞վ ազատեց Պետրոսը:

### **ԳՅՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ**

«Տէ՛ր, ազատէ զիս»: Մատթ. ԺԴ. 30

Ի. ԴԱՍ

## **ՃԼԱՏ ԵՒ ԱՆՁՆԱՍԵՐ ՄԵԾԱՀԱՐՈՒՍԸ**

(Ղուկ. ԺԲ. 16 - 21)

Հարուստ մարդ մը կար որ ունէր արտեր եւ կալուածներ: Իր ամբողջ յոյսը դրած էր իր հարստութեան վրայ: Իր միակ մտածումն էր դրամ շահիլ, ուտել, խմել եւ զուարճանալ: Իրեն համար դանձեր կը դիզէր, որպէսզի այս աշխարհի մէջ փառաւոր եւ հանդիստ կեանք մը ապրէր: Աղքատներու օղնելու մասին չէր մտածեր իսկ:

Տարի մը այս հարուստ մարդուն արտերը շատ բերք տուին: Այս առատութիւնը տեսնելով ուրախացաւ եւ սկսաւ ինքնիրեն մտածել ու ըսել.

- Արտերս շատ բերք տուին եւ ամբարներս նեղ պիտի զան, ուստի ամբարներս մեծցնել տամ. բոլոր բերքերս ու բարիքներս հոն ժողովեմ եւ իմ անձիս բռնեմ. «Ո՞վ իմ անձս շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար ժողովուած, հանդէ՛, կե՛ր, խմէ՛ եւ ուրախ եղի՛ր»:

Բայց Աստուած ըսաւ անոր.

- Անձիս, այս պիշեր հողիդ քեզմէ պիտի պահանջուի. ուստի այն քու պատրաստած բաներդ որո՞ւ պիտի ըլլան:

Յաջորդ առաւօտ հարուստ մարդը մեռած գտնուեցաւ: Իր ունեցած հարստութիւնը օդուտ մը չունեցաւ իր հողի փրկութեան համար:

## ՆՁՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս այս առակը խօսեցաւ, որպէսզի մարդիկ իրենց յոյսը դրամի եւ ստացուածքի վրայ չդնեն: Հարստութիւնն ու աշխարհի գանձերը վաղանցուկ բաներ են: Մարդիկ իրենց յոյսը դնելու են միայն Աստուծոյ վրայ:

Դրամի տէր եղողները հպարտանալու չեն իրենց ունեցած հարստութեան համար, այլ անկէ բաժին հանելու են աղքատներուն եւ Աստուծոյ գործին:

Ագահութիւնը մեծ մեղք է եւ իրեն անձնատուր եղողները կը մեռցնէ:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Հարուստ մարդը ինքնիրեն ի՞նչ ըսաւ երբ իր արտերը առատ բերք տուին:
- 2) Աստուած ի՞նչ ըսաւ իրեն:
- 3) Հարուստ մարդը ինչո՞ւ համար պատժուեցաւ:
- 4) Հարուստ մարդը ինչպիսի՞ կեանք մը կ'ապրէր:
- 5) Մեր յոյսը որո՞ւ վրայ դնելու ենք:

## ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

«Ի՞նչ կը շահի մարդ մը՝ եթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ»: Մատթ. ԺԶ. 26:

Ի Ա . Դ Ա Ս

## ՉՈՐՍ ՀԱԶԱՐՆԵՐՈՒ ԿԵՐԱԿՐՈՒԻԼԸ

(Մատթ. ԺԵ. 29-38)

Յիսուս իր աշակերտներով նորէն Գալիլիոյ ծովեզերքը եկաւ ու լեռը ելաւ: Շրջակայ ու հեռաւոր վայրերէ մեծ բազմութիւն մը

հաւաքուեցաւ իր շուրջը: Յիսուս կը քարոզէր անոնց եւ կը բժշկէր հիւանդները, կաղերն ու կոյրերը: Մարդիկ անոր հրաշքները տեսնելով զԱստուած կը փառաւորէին:

Մի քանի օր այսպէս շարունակուեցաւ եւ բազմութեան թիւը հասաւ չորս հազարի՝ կիներէն ու մանուկներէն դատ: Յիսուս իր աշակերտները քովը կանչելով ըսաւ.

- Կը խզճամ այդ ժողովուրդին վրայ, վասնզի անա երեք օրէ ի վեր քովս են եւ բան մը չունին ուտելու: Եթէ ատոնք իրենց սունկերը անօթի գրկեմ, ճամբուն մէջ պիտի մարին, քանի որ ատոնցմէ ո՛մանք հեռու տեղերէ եկած են:

- Մենք այս անապատին մէջ ուրկէ՞ պիտի կրնանք բաւարար հաց ճարել այս հոծ բազմութիւնը կշտացնելու համար, ըսին աշակերտները:

- Քանի՞ նկանակ ունիք, հարցուց Յիսուս:  
- Եօթը նկանակ ու քանի մը մանր ձուկեր ունինք, ըսին աշակերտները:

Յիսուս հրամայեց որ սովէն մարդ ղետինը նստի: Ապա եօթը նկանակները եւ ձուկերը առաւ, դոհացաւ եւ կտրելով աշակերտներուն տուաւ: Յիսուսի օրհնութեամբ հացերն ու ձուկերը բազմացան: Աշակերտները զանոնք դամբիւղներու մէջ լեցնելով ժողովուրդին բաժնեցին: Բոլորն ալ կերան ու կշտացան եւ աշակերտները եօթը զամբիւղ հացի փշրանքներ վերցուցին:

## ՆՁՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս կը գրայ ու կ'ողորմի իր ժողովուրդին եւ զանոնք անօթի չի ձգեր: Ան ամենակարող է եւ կրնայ իր գաւակներուն պէտքերը հոգայ ամենամեղ պարագաներուն իսկ:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս անօթի բազմութեան դժբախտ ի՞նչ ըսաւ իր աշակերտներուն:
- 2) Աշակերտները ի՞նչ պատասխանեցին Յիսուսի:

- 3) Աշակերտները քանի՞ նկանակ ունէին:
- 4) Յիսուս ի՞նչ ըրաւ եօթը նկանակներն ու ձուկերը:
- 5) Յիսուս քանի՞ հազար հոգի կշտացուց:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

« Կերան ամէնը եւ կշտացան, ու եօթը զամբիւղ լեցուն՝ աւելցած փշրամփները վերցուցին» Մատթ. ԺԵ. 37:

ԻՔ. Դ Ա Ս

## ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. ԺԵ. 1-8)

Օր մը Յիսուս իր աշակերտներէն Պետրոսը, Յովհաննէսը եւ Յակոբոսը հետն առաւ ու դանոնք թարծր լեռ մը հանեց աղօթք ընելու համար: Աղօթելու ատեն, յանկարծ Յիսուսի գէմքը արեգակի նման փայլեցաւ ու հանդերձները լոյսի պէս ճերմկեցան: Նոյն ատեն աշակերտները տեսան Մովսէս եւ Նղիա մարգարէները որոնք Յիսուսի հետ կը խօսէին:

Պետրոս այս տեսարանին առջեւ դարմացաւ եւ այնքան հրապուրուեցաւ որ շփոթելով ըսաւ.

— Տէր, աղէկ է որ հոս կենանք ու երեք խրճիթ շինենք. մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ մէկն ալ Նղիայի:

Նոյն պահուն լուսաւոր ամպ մը եկաւ ու անոնց վրայ հովանի եղաւ, եւ ամպին մէջէն ձայն մը եկաւ ըսելով, «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւանք եմ, ատոր մտիկ ըրէք»:

Աշակերտները այս ձայնը լսելով շատ վախցան ու իրենց երեսին վրայ գետին իյնալով թմրեցան: Քիչ ետք Յիսուս իրենց մօտենալով զպաւ եւ ըսաւ.

— Ելէք ու մի՛ վախնաք:

Աշակերտները ոտքի ելլելով Յիսուսէն զատ ոեւէ մէկը չտեսան: Լեռնէն վար իջնելու ատեն Յիսուս պատուիրեց իրենց որ այս տեսիլքը մարդու չըսեն մինչեւ իր յարութիւն առնելը:

### ԵՋՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուսի այլակերպութեան ատեն ամպին մէջէն եկող Աստուծոյ ձայնը ներկայիս մեզի ալ կը խօսի Սուրբ Աւետարանին միջոցաւ ու կը պատուիրէ որ Աստուծոյ միածին Որդւոյն Յիսուս Քրիստոսի խօսքերը մտիկ ընենք:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս իր երեք աշակերտները առնելով ո՞ւր ելաւ:
- 2) Տուր անունները այդ երեք աշակերտներուն:
- 3) Աղօթքի պահուն, յանկարծ ի՞նչ պատահեցաւ:
- 4) Ո՞ր մարգարէները երեւցան Յիսուսի քով:
- 5) Պետրոս շփոթած վիճակի մէջ ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 6) Ամպին մէջէն եկող ձայնը ի՞նչ ըսաւ:
- 7) Աշակերտները իրենց վախէն ի՞նչ եղան:
- 8) Լեռնէն վար իջնելու ատեն Յիսուս ի՞նչ պատուիրեց իր երեք աշակերտներուն:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

«Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւանք եմ, Աստոր մտիկ ըրէք»: Մատթ. ԺԵ. 5:

Ի Ք. Դ Ա Ս

## ՏԱՍԸ ԲՈՐՈՏՆԵՐԸ

(Ղուկ. ԺԵ. 11-19)

Յիսուս իր աշակերտներով Երուսաղէմ երթալու ատեն Գալիլէոյ ու Սամարիայի մէջտեղէն կ'անցնէր: Ծամբան հանդիպեցաւ

տասը բորտաներու, որոնք զինք տեսնելով սկսան պոռալ:

- Յիսուս Վարդապետ, ողորմէ մեզի:

Յիսուս զանոնք բժշկեց եւ ըսաւ:

- Գացէք զուք ձեզ քահանաներուն ցուցուցէք:

Հրեաներուն օրէնքն էր որ քահանաներ ստուգէին մէկու մը բորտաութենէ մաքրուած ըլլալը եւ ապա արտօնէին անոր՝ մարդոց հետ միասին ապրիլ:

Բորտաները երբ տեսան թէ իրենց վէրքերէն բուժուած են, ուրախութեամբ վազեցին եւ աներեւոյթ եղան: Սակայն՝ ատոնց մէջ Սամարացի(\*) մը կար որ իր բժշկուիլը տեսնելով ետ դարձաւ ու մեծ ձայնով փառք տուաւ Աստուծոյ: Ան մօտեցաւ Յիսուսին ու երեսի վրայ անոր ոտքերուն իյնալով շորհակալութիւն յայտնեց:

Յիսուս իր շուրջը գտնուողներուն ըսաւ:

- Զէ՞ որ բժշկուողները տասը հոգի էին, ո՞ւր են միւսները:

Այս օտարազգիէն զատ ուրիշներ չգտնուեցա՞ն որ Աստուծոյ փառք տային: - Եւ դառնալով բժշկուող Սամարացիին ըսաւ: - Ելի՛ր, զընա՛, քու հաւատքդ քեզ բժշկեց:

### ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամէն ոք Սամարացի բարտին նման Աստուծոյ փառք տալու է իր վայելած բարիքներուն համար: Նոյնպէս ամէն ոք շնորհակալութիւն յայտնելու է իր ընկերին երբ անկէ ծառայութիւն մը ընդունի:

(\*) Սամարացիներ ու հրեաներ իրարու թշնամի ազգեր էին: Հրեաներ միշտ ատելութեամբ լեցուած էին Սամարացիներու հանդէպ եւ անոնց հետ յարաբերութիւն չէին ընէր: Հրեաներ ինքզինքնին Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը նկատելով մեղք կը համարէին Սամարացիներու հետ յարաբերիլը, քանի որ անոնք կէս հեթանոսական կեանք մը կ'ապրէին: Բայց այս պատմութեան մէջ կը տեսնենք որ Սամարացի բարտը երախտագէտ եղաւ Յիսուսին, մինչև հրեաները ասերախտ գտնուեցան:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Որո՞նք հանդիպեցան Յիսուսի:
- 2) Բորտաները ի՞նչ լսելով կը պոռային:
- 3) Յիսուս ի՞նչ ըսաւ անոնց:
- 4) Ո՞վ ետ դարձաւ շորհակալութիւն յայտնելու համար:
- 5) Յիսուս ի՞նչ ըսաւ իր շուրջը գտնուողներուն:
- 6) Յիսուս բժշկուող Սամարացիին դառնալով ի՞նչ ըսաւ:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

«Ելի՛ր, գնա՛, քու հաւատքդ քեզ բժշկեց»: Դուկ. ԺԷ. 19:

### ԻԴ. Դ Ա Ս

### ԶԱՔԷՈՍԻ ԴԱՐՁԸ

(Դուկ. ԺԹ. 1-10)

Երբեք մէջ կ'ապրէր Զաքէոս անունով մեղաւոր մարդ մը որ քապետ(\*) էր եւ շատ հարստութիւն ունէր:

Զաքէոս լսած էր Յիսուսի մասին, եւ օր մըն ալ երբ իմացաւ Ան Երբեքով եկեր է, ուղեց զԱյն տեսնել:

Յիսուս մեծ ամբօխէ մը շրջապատուած՝ կ'անցնէր Երբեքովի: Զաքէոս կարճահասակ ըլլալուն՝ չէր կրնար Յիսուսին դէմ-տեսնել: Ուստի ձամբուն կ'երբը դանուող ժանտաթղկնիի մը կ'աւ եւ սպասեց Անոր դալուն:

(\*) Մաքսաւորները կառավարական պաշտօնեաներ էին, ու քաղաք մտնող եւ ելլող ապրանքներէն մասնա (տուրք) կը տրէին: Յիսուսի ժամանակ մաքսաւորները առհասարակ իրենց ինքնին մեղք կը գանձէին ու ժողովուրդը կը կեղծէին: Իրենց ար սուրը, կեղծիքը, զրպարտութիւնն ու անիրաւութիւնը սուկան քաներ էին: Մաքսաւոր բառը գրեթէ հոմանիշ դարձած էր մեղաւոր բառին: Զաքէոս մաքսաւորներու պետն էր:

Երբ Յիսուս այնտեղ հասավ, վեր նայելով Չաքէոսը տեսաւ եւ ըսաւ .

– Չաքէոս, շուտ բրէ, ծառէն վար իջիր, ես այսօր չու տունդ կ'ուզեմ դալ :

Չաքէոս ուրախութեամբ ծառէն վար իջաւ եւ Յիսուսը իր տունը տարաւ : Ճոխ սեղան մը պատրաստեց եւ հիւրասիրեց զԱյն : Սակայն բան մը կը ճնշէր Չաքէոսին սիրտը : Ան կը դգար թէ ինք մեղքերով բեռնաւորուած մէկն էր . եւ պէտք ունէր խոստովանութեան ու ապաշխարութեան : Ուստի Յիսուսի առջեւ կայնելով ըսաւ .

– Տէր, ահա իմ ունեցածիս կէսը աղքատներուն կուտամ, իսկ եթէ ասկէ առաջ ոեւէ մէկուն զրկանք մը ըրած եմ, չորեքպատիկ պիտի հատուցանեմ :

Յիսուս Չաքէոսի զոջումն ու խոստովանութիւնը տեսնելով ըսաւ .

– Այսօր այս տանը փրկութիւն եղաւ :

Այնուհետեւ Չաքէոս դարձաւ բարեպաշտ եւ արդար մարդ մը :

### ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մարդիկ որքան ալ մեղաւոր ըլլան, Աստուած կը ներէ անոնց եւ կը փրկէ, պայմանաւ որ սրտանց զոջան ու ապաշխարեն :

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Չաքէոսին կեանքը ինչպէ՞ս էր Յիսուսի չհանդիպած :
- 2) Չաքէոս ինչո՞ւ համար ծառին վրայ ելաւ :
- 3) Յիսուս Չաքէոսը ծառին վրայ տեսնելով ի՞նչ ըսաւ :
- 4) Չաքէոս Յիսուսի առջեւ կայնելով ի՞նչ ըսաւ :
- 5) Յիսուս Չաքէոսի խոստովանութիւնը մտիկ ընելէ ետք ի՞նչ ըսաւ :
- 6) Այնուհետեւ Չաքէոս ինչպիսի՞ մէկը դարձաւ :
- 7) Աստուած մեղաւորներուն մեղքերը ե՞րբ կը ներէ :

### ԳՈՑ ՄԱՐԿՆԵՑՈՒՐ

«Վասնզի Սրբին Մարդայ եկաւ որպէսզի կարսուածը փնտռէ զկէ» : Դուկ. ԺԹ. 10 :

ԻՇ. Դ Ա Ս

### ՄԱՐԻԱՍ ԵՒ ՄԱՐԹԱ

(Դուկ. Ժ. 38-42)

Ղազարոս անունով բարեպաշտ մարդու մը ջոյրերն էին Մարթա Մարիամ : Յիսուս Իեթանիա դիւղը հանդիպելուն, յաճախ ըէր անոնց տունը :

Օր մը Յիսուս դարձեալ Ղազարոսին տունը դնաց : Երկու ջոյուրախացան մեծ Հիւրին այցելութեան համար : Մարթա սկսաւ ուրի պատրաստութիւն տեսնել ու սպասաւորել, որպէսզի կալաւորոյն կերպով հիւրասիրել Յիսուսը . սակայն Մարիամ իր ջով նստաւ եւ սկսաւ անոր խօսքերը մտիկ ընել, որպէսզի ար Ատուծոյ պատգամները :

Մարթա տեսաւ որ իր ջոյրը Յիսուսը համադամ կերակուրնեւորասիրելու մասին հոգ չ'ըներ, այլ կը շարունակէ Անոր հարուղիլ եւ մտիկ ընել : Ուստի, սրտնեղած՝ մօտեցաւ Յիսուսի .

Տէր, չու հոգ չէ՞ որ իմ ջոյրս զիս մինակ թողուց սպասան մէջ, ուստի թելադրէ անոր որ ինծի օգնէ : Իսուս ըսաւ Մարթայի .

Մարթա, Մարթա, դուն շատ բաներու համար հոգ ընելով նստիս, բայց մէկ բան պէտք է, եւ Մարիամ այն աղէկ բարեց, որ իրմէ բնաւ պիտի չառնուի :

### ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

անքի ընթացքին աւելի կարեւորութիւն տալու եմք Աստու-

ծոյ խօսքին եւ անոր պատուիրաններու զործադրութեան քան թէ նիւթական եւ աշխարհիկ գրազուգներու: Միայն նիւթական գրազուգներու անձնատուր ըլլալով կը կորսնցնենք մեր եռգեկան պետեբը եւ կը գրկուինք երկինքի արքայութեան վայելքներէն:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Մարթա եւ Մարիամ որո՞ւն քոյրերն էին:
- 2) Ղազարոս եւ իր քոյրերը ո՞ր դիւղին մէջ կը բնակէին:
- 3) Յիսուսի ներկայութեան Մարթա եւ Մարիամ ի՞նչ կ'ընէին:
- 4) Մարթա ի՞նչ ըսաւ Յիսուսի իր քրոջ մասին:
- 5) Յիսուս ի՞նչ պատասխանեց Մարթայի:

### ԳՈՅ ՍՈՒՂԵՑՈՒՄ

«Ո՛րչափ կը սիրեմ քու օրէնքդ, այն է ամէն օր իմ մտածութիւնս»: Սաղմ ձԺԸ. (ձԺԹ.) 97:

## ԻՁ. ԴԱՍ ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. ԺԱ. 1-44)

Օր մը Յիսուսին սիրելի բարեկամը՝ Ղազարոս ծանր աստիճան հիւանդացաւ: Իր քոյրերը անմիջապէս մարդ զրկեցին Յիսուսի քով որպէսզի դար եւ բժշկէր իրենց եղբայրը: Այդ օրերուն Յիսուս կը գտնուէր Յորդանան գետին քով եւ քարոզութիւններ ու հրաշքներ կը կատարէր:

Յիսուս Ղազարոսի հիւանդութեան լուրը առնելով՝ անմիջապէս Բեթանիա շրջաց, այլ երկու օր եւս կեցաւ եւ անկէ ետք ըսաւ իր աշակերտներուն.

– Եկէք, նորէն Հրէաստան երթանք:

Աշակերտները Իրեն ըսին.

– Հրեաները Քեզ կը փնտռեն քարկոծելու, ու նորէն հո՞ն կ'երթաւ:

– Ղազարոս՝ մեր բարեկամը քնացած է, կ'երթամ, որպէսզի զինք արթնցնեմ, ըսաւ Յիսուս իր աշակերտներուն. սակայն անոնք Հհասկցան թէ Յիսուս ի՞նչ ըսել կ'ուզէր. ուստի ըսին իրեն.

– Տէր, եթէ քնացած է, կրնայ ինքնիրեն արթննալ:

Այն ատեն Յիսուս ըսաւ անոնց.

– Ղազարոս մեռաւ...

Երկու օր համբարդելէ ետք, Յիսուս իր աշակերտներով հասաւ Բեթանիա դիւղը. իսկ Ղազարոսի մարմինը արդէն չորս օրէ ի վեր դերեզմանի մէջ դրուած էր:

Ղազարոսին մեծ քոյրը՝ Մարթա Յիսուսի գալը իմանալով, զԱյն դիմաւորելու գնաց:

– Տէր, եթէ հոս ըլլացիր իմ եղբայրս կը բժշկուէր եւ ան չէր մեռներ, ըսաւ Մարթա, Յիսուսի:

– Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ, ըսաւ Յիսուս:

– Գիտեմ որ յարութեան ժամանակը, վերջին օրը յարութիւն պիտի առնէ, ըսաւ Մարթա:

Յիսուս ըսաւ.

– Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ան որ ինձի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի... Ի՞նչ կը հաւատաս՞ սաոր:

– Այո՛, Տէր, ես հաւատացեր եմ որ Ի՞նչ ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին որ աշխարհ վալու էիր, ըսաւ Մարթա եւ գնաց իր քրոջ՝ Մարիամին դազանաբար լուր տուաւ թէ Յիսուս եկեր է եւ զինք կը կանչէ:

Մարիամ շուտով ելաւ ու Յիսուսը տեսնելու գնաց: Ձերեկը միտքարելու համար եկող հրեաները Մարիամին տունէն դուրս ելլելը տեսնելով, անոր հետեւէն գացին, խորհելով որ ան իր եղբոր դերեզմանին վրայ լալու կ'երթար:

Մարիամ երբ Յիսուսը տեսաւ, անոր ոտքը ինկաւ ու լալով ըսաւ.

– Տէր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ:

Յիսուս Մարիամին ու անոր ընկերացող բազմութեան լացը տեսնելով, ինքն ալ խոսովեցաւ ու հարցուց անոնց՝

– Ո՞ր դրած էք դայն:

– Տէր, եկուր եւ տես, ըսին ներկաները Իրեն:

Յիսուս հետեւեցաւ անոնց եւ ինքն ալ լացաւ: Ապա հրամայեց որ դերեզմանին դռնէն քարը մէկդի ընեն:

Վարժա. ըսաւ Յիսուսի :

— Տէ՛ր, եղբորս մարմինը մինչեւ հիմա արդէն հոտած պի-  
լլայ, որովհետեւ չորս օրուան է :

— Բեղի չընի՞ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պի-  
տեսնես, պատասխանեց Յիսուս անոր :

Երբ դերեզմանին զոնէն քարը մէկդի հրեցին, Յիսուս իր ս-  
քերը վեր վերցնելով աղօթեց. եւ ետքը մեծ ձայնով մը կանչեց .

— Դազարոս, դուրս եկուր :

Չորս օրուան մեռած Դազարոսը գերեզմանէն դուրս ելաւ  
նոտքերն ու ձեռքերը պատանքով. եւ երեսն ար վարչամակով պա-  
ռուած :

Յիսուս ըսաւ անոնց .

— Արձակեցէք զայն ու թողէք որ երթայ :

Հոն գտնուող մարդիկը այս հրաշքը տեսնելով զարմացան  
չատեր հաւատացին Յիսուսի :

### ՆՁԻՐԱԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Յիսուս ամենակարգ է եւ մեռելները կրնայ կենդանացն  
Ով որ իրեն հաւատայ, մեռելիէ ետք օր մը յարութիւն աննելով  
ջանիկ կեանք մը պիտի ապրի երկինքի արքայութեան մէջ :

### ՋԱՐՑՈՒՄԸՆԵՐ

- 1) Յիսուս Դազարոսի հիւանդութեան լուրը աննելէ՝ ետք ի-  
րաւ եւ ի՞նչ ըսաւ իր աշակերտներուն :
- 2) Աշակերտները ի՞նչ պատասխանեցին իրեն :
- 3) Բեթանիա հասնելուն, առաջին անգամ ո՞վ դիմաւորեց ի-  
րան :
- 4) Մարթա Յիսուսը տեսնելով ի՞նչ ըսաւ :
- 5) Յիսուս ի՞նչ պատասխանեց Մարթային :
- 6) Դազարոս քանի՞ օրուան մեռած էր :
- 7) Յիսուս ի՞նչ ըսելով կանչեց մեռեալը :

### ԳՈՅ ՍՈՐՎԵՑՈՒՄ

«Ես եմ յարութիւնը ու կեանքը. ան որ ինձի կը հաւատա-  
րէւս մեռնի՝ պիտի ապրի» : (Յովհ. ԺԱ. 25) :

Ի Ե Ա Ս

## ՅԻՍՈՒՍ ԻՐ ԱՅՍԿԵՐՏՆԵՐՈՒՆ

### ՈՏՔԵՐԸ ԿԸ ԼՈՒԱՅ

(Յովհ. ԺԳ. 1-16, 34-35)

Յիսուս իր աշակերտներուն հետ նստած էր վերջին ընթրիքը  
ընելու մինչ կը ճաշէին, ոտքի ելաւ եւ դենջակ մը առնելով մէջը  
փաթթեց : Ապա կոնքին մէջ ջուր լեցուց եւ սկսաւ շարքով աշակերտ-  
ներուն ոտքերը լուալ ու դենջակով սրբել :

Կարգը եկաւ Պետրոսի :

— Տէ՛ր, ըսաւ ան, Դո՞ւն իմ ոտքերս պիտի լուաս, այդ անկա-  
րելի բան է : Դուն մեր վարդապետն ես եւ մենք քոն աշակերտներդ  
ենք : այդ ինչպէ՞ս կրնայ ըլլալ :

Յիսուս պատասխանեց Պետրոսին .

— Ես ինչ որ կ'ընեմ, դուն հիմա չես իմանաք, այլ ետքը կ'ի-  
մանաս :

— Տէր, Դուն իմ ոտքերս պիտի չլուաս, ըսաւ Պետրոս դար-  
ձեալ :

— Եթէ չլուամ, դուն ինձի հետ բաժին չես ունենար, ըսաւ  
Յիսուս :

Այս խօսքին վրայ Պետրոս ըսաւ Յիսուսի .

— Տէ՛ր, քանի որ այդպէս է, ոչ թէ միայն ոտքերս, այլ ձեռ-  
քերս ու գլուխս ալ լուա :

— Լուացուածին ոտքերը լուալէն զատ ուրիշ բան պէտք չէ...  
ըսաւ Յիսուս :

Երբ բոլորին ոտքերը լուաց, դենջակը մէկդի դրաւ ու իր հան-  
դերձները վրան առնելով ետ սեղան նստաւ ու ըսաւ անոնց .

— Գիտէ՞ք, ես ինչ ըրի ձեզի : Դուք զիս վարդապետ ու Տէր կը  
կոչէք, եւ այդպէս ալ եմ : Ուստի ես ձեր վարդապետն ու Տէրը ըլ-  
լալով ձեր ոտքերը լուացի եւ ձեզի օրինակ մը տուի որպէսզի դուք  
ալ իրարու ոտքերը լուաք :

Յիսուս կարգ մը խրատականներ ալ տուաւ իր աշակերտնե-  
րուն եւ ի մէջ այլոց ըսաւ .

- Նոր պատուիրան մը կուտամ ձեզի որ մէկզմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ զուք ալ մէկզմէկ սիրէք: Ասով ամէնը պիտի գիտնան թէ իմ աշակերտներս էք, եթէ իրարու վրայ սէր ունենաք:

**ՆՁՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ**

Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուարով ուզեց անոնց սարկեցնել իրարու ծառայել: Յիսուսի քրածը խոնարհութեան եւ հեգուքեան մեծ օրինակ մըն է մեր բոլորին համար:

Որպէս քրիստոնէայ մեր պարտականութիւնն է գիրար սիրել, ծառայել իրարու եւ ըլլալ խոնարհ ինչպէս որ եղաւ մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս:

Ուրիշներուն ծառայելով ոեւէ մէկը չի նուաստանար, ընդհակառակը՝ կը բարձրանայ:

**ՀԱՐՑՈՒՄՆԵՐ**

- 1) Ընթրիքի միջոցին Յիսուս ի՞նչ ըրաւ:
- 2) Երբ Յիսուս Պետրոսին ոտքերը պիտի լուար, ան ի՞նչ ըսաւ:
- 3) Յիսուս ի՞նչ պատասխանեց Պետրոսին:
- 4) Յիսուսի պատասխանէն ետք Պետրոս թոյլ տուա՞ւ:
- 5) Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուարէ ետք ի՞նչ պատահեց անոնց:
- 6) Մենք, որպէս քրիստոնէաներ ի՞նչ ընելու ենք իրարու:

**ՊՈՅ ՍՈՐՎՆՅՈՒՐ**

«Հապա եթէ ես Տէրս ու Վարդապետս ձեր ոտքերը լուարի, պէտք է որ դուք ալ իրարու ոտքերը լուար»: Յովհ. ԺԳ. 14:

ԻՇ. Դ Ա Ս

**ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

(Մատթ. ԻԶ. 26-29, Մարկ. ԺԳ. 22-25, Դուկ. ԻԲ. 19-20, Ա. Կարն. ԺԱ. 23-29)

Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուարէ ետք հաւ սեղան նստաւ ու շարունակեց ընթրիքը:

Մինչ բոլորը կ'ուտէին, Յիսուս սեղանէն հաց անաւ, զոճացաւ, կտրեց եւ տուաւ իր աշակերտներուն ըսելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այն է իմ մարմինս որ ձեզի համար տրուած է. ասիկա ըրէ՛ք զիս յետէլու համար»:

Աշակերտները Յիսուսի օրհնած հացէն մէկ-մէկ կտոր առին ու կերան:

Նոյնպէս, Յիսուս զինի թափակը առաւ, զոճացաւ ու տուաւ աշակերտներուն ըսելով. «Ամէնզ ալ խմեցէ՛ք ասիկէ, վասնզի ասիկա է իմ արիւնս նոր ուխտի, որ ձեզի եւ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար: Ասիկա ըրէ՛ք ամէն անգամ որ խմէ՛ք, զիս յիշելու համար»:

Աշակերտները խմեցին նոյն թափակէն:

Յիսուս իր սքոտ արարքովն ու արտասանած խօսքերովը հաստատեց Սուրբ Հաղորդութեան խորհուրդը, զոր կը կատարեն բոլոր եկեղեցիները, եւ հաւատացեալները կը ճաշակեն Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Սուրբ Հաղորդութեան խորհուրդին արարողութիւնը կը կոչուի Պատարագ:

**ՆՁՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ**

Սուրբ Հաղորդութիւն առնելով Յիսուս Քրիստոսը մեր ներսիդին ընդունած կըլլանք: Ուրեմն որքա՞ն գոյշ պէտք է ըլլանք հաղորդութիւն առնելէ առաջ: Նախ մեր մեղքերուն վրայ զգջալու ենք եւ ապա խոստովանութեամբ, ապաշխարութեամբ եւ «մեկայ Աստուծոյ» ըսելով Աստուծմէ բողոքութիւն ինդրելու ենք մեր մեղքերը:

Ֆերուս համար: Եկեղեցւոյ ֆահանան (որ Աստուծոյ ծառան է եւ Անկէ իշխանութիւն ունի մեզ մեղքէ արձակելու) խոստովանանքէն վերջ մեզ արձակելու է մեր մեղքերէն: Անկէ ետք մաքրուած սրտով մօտենալու եմք Սուրբ Հաղորդութեան: Յիսուս Սր. Հաղորդութեան մէջ ներկայ է, քանի որ Սուրբ Հաղորդութեան հացը նշմարտապէս իր մարմինն է եւ գինին ալ ստուգապէս իր արիւնը:

Սուրբ Հաղորդութիւնը մեր ներսիդին մտնելով մեզ Գը սրբէ ու կը մաքրէ: Սակայն ով որ մաքուր խիղճով չմօտենայ Սուրբ Հաղորդութեան, եւ իր մեղքերէն առանց սրբուելու քաշակէ Յիսուսի մարմինն ու արիւնը, իր մեղքերուն վրայ աւելի մեծ մեղք մը կ'աւելցնէ:

Սուրբ Հաղորդութեան չմօտեցած ներելու եմք իրարու յանցանքները: Եթէ նախապէս մէկու մը հետ վեճ ունենալով սրտնեղած ըլլանք, անպայման հաշտուելու եմք: Քէն վիճակով Սուրբ Հաղորդութիւն առնելը շատ մեծ մեղք է:

### ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս վերջին ընթրիքի ատեն հացը առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ իր աշակերտներուն:
- 2) Յիսուս գինիի բաժակը առնելով ի՞նչ ըսաւ:
- 3) Յիսուս ո՞ր խորհուրդը հաստատեց վերջին ընթրիքին:
- 4) Սուրբ Հաղորդութեան հացը որո՞ւն մարմինն է:
- 5) Սուրբ Հաղորդութեան գինին որո՞ւն արիւնն է:
- 6) Սուրբ Հաղորդութիւնը ճաշակելով զ՞՞վ ընդունած կ'ըլլանք մեր ներսիդին:
- 7) Սուրբ Հաղորդութիւն առնելէ առաջ ի՞նչ որպէս ընելու պարտաւոր ենք:

### ԳՈՑ ՍՈՒՂ ԵՏՈՒՐ

«Ով որ իմ մարմինն ուտէ եւ իմ արիւնն խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ»: Յովհ. Զ. 55:

ԻՅ. Դ Ա Ս

## ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. ԻԶ. 47-75; ԻԵ. 1-66; Դուկ. ԻԳ. 39-43; Յովհ. ԺԹ. 17-30)

Յիսուս երեք տարի քարոզեց որպէսզի մարդիկ իրենց սրտերը Աստուծոյ նուիրէին: Ան յանդիմանեց հրեաները որպէսզի ձգէին իրենց չար գործերն ու մեղքերը: Շատեր մտիկ ըրին Յիսուսի խօսքերը եւ սկսան բարի կեանք մը ապրիլ. սակայն հրեան ջահանա-յապետներն ու իշխանները թշնամութեամբ մօտեցան Յիսուսի: Անոնք փոխանակ իրենց չար գործերէն հեռանալու, որոշեցին Յիսուսը մեղցնել եւ սղատիլ անոր յանդիմանական խօսքերէն:

Դժբախտաբար Յիսուսի տառներկու աշակերտներէն Յուդա միացաւ հրեաներուն եւ անոնցմէ զրամ առնելով խոստացաւ իր Տէրը մատնել:

Հրեաներ հոովմայեցի զինուորներու զլուրն անցած, Յուդայի առաջորդութեամբ Գեթսեմանիի պարտէզը գացին ու ձերբակալեցին Յիսուսը որ իր աշակերտներովը հոն դացած էր եւ կ'աղօթէր:

Յիսուս ամենակարող էր եւ կրնար անշարժութեան մատնել իր թշնամիները ու անոնց ձեռքը չիյնալ: Սակայն Ան իր յօժար կամքովը յանձնուեցաւ անոնց, քանի որ ինք աշխարհ եկած էր մարդոց փրկութեան համար չարչարուելու, խաչուելու եւ իր սուրբ արիւնը թափելու:

Յաջորդ առաւուտ հրեաներ Յիսուսը կապելով տարին Հրեաստանի կուսակալ Գոնտացի Պիղատոսի քով եւ խնդրեցին անկէ որ զԱյն խաչէ: Պիղատոս Յիսուսը հարցաքննեց եւ Անոր վրայ յանցանք մը չգտնելով ուղեց ազատ արձակել. սակայն հրեաները պռնացին եւ ըսին.

— Վերցուր, վերցուր, խաչը հանէ Ատիկա:

Պիղատոս հրեաներու պնդումին վրայ հրամայեց իր զինուորներուն որ Յիսուսը խաչը հանեն:

Հոովմայեցի զինուորները սկսան մտրակներով տանջել ու չարչարել Յիսուսը: Ապա անոր հապտուցին կարծիք պատմուեան գլխուն զրին փուչէ պսակ մը եւ ձեռքը եղէց մը տալով ծաղրեցին ու անխնայ ձեռեցին:

Ձինուորներու հսկողութեան տակ, մեծ շարժարանքներ կրելով, Յիսուս իր խաչը ուսին վրայ շաղկած՝ բարձրացաւ մինչեւ Կողմաշի բարձունքը: Հոն դինքը խաչին վրայ դամեցին ու իր երկու կողմերն ալ մէյմէկ աւազակներ խաչեցին:

Այս բոլոր շարժարանքերու ընթացքին Յիսուս զինք խաչողներուն համար աղօթեց եւ ըսաւ.

- Հայր, թողութիւն տուր ատոնց, վասնզի չեն գիտեր թէ ի՞նչ կ'ընեն:

Ձինք խաչել տուող հրեաները խաչին առջեւ անցնելով սկսան ծաղրել ու անարգել: Իսկ իր քովը խաչուող աւազակին մէկն ալ սկսաւ հայհոյել ու ըսել.

- Եթէ դուն Քրիստոսն ես, աղատէ քու անձը ու մեզ ալ:

Սակայն միւս աւազակը իր ընկերը յանդիմանելով ըսաւ.

- Դուն Աստուծո՞ւմէ չե՞ս վախճար: Մենք այս դատապարտութեան արժանի էինք, բայց ասիկա պէշ բան մը չըրաւ:

Այս խօսքէն վերջ Յիսուսի դատնալով ըսաւ.

- Տէր, երբ քու թաղաւորութիւնովք դաս, յիշէ դիս:

Յիսուս պատասխանեց անոր.

- Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, դուն այսօր ինձի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս:

Յիսուս խաչին վրայէն երբ իր մայրը եւ անոր մօտ կայնող իր սիրելի աշակերտը՝ Յովհաննէսը տեսաւ, ըսաւ մօրը՝ Յովհաննէսին ակնարկելով.

- Ով կին, ահա քու որդիդ:

Ետքը աշակերտին ալ ըսաւ.

- Ահա քու մայրդ:

Այնուհետեւ Յովհաննէս Մարիամ Աստուածածինը իր քով առաւ:

Մինչ Յիսուս խաչին վրան էր, երեք ժամ խաւար տիրեց երկրի վրայ, որմէ ետք Յիսուս բարձր ձայնով աղաղակեց. «Էլի, էլի, լա՛մա սարաքթանի», որ ըսել է, «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ դիս թողուցիր»: Հոն կեցողներէն մէկը սպունգը քացախի մէջ թաթխեց ու եղէզի մը ծայրը անցընելով երկարեց Յիսուսի բերնին որ խմէ:

Ապա, Յիսուս դարձեալ մեծ ձայնով մը «Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս» աղաղակեց եւ հոգին աւանդեց:

Նոյն միջոցին երուսապէսի տաճարին վարաւոյրը վերէն վար երկուքի ճեղքուեցաւ ու երկիր շարժեցաւ եւ քարերը պատուեցան:

Յիսուսի խաչին դիմաց կայնող հռովմայեցի հարիւրապետն ու իրեն հետ եղբայրը այս բաները տեսնելով շատ վախցան ու ըսին. «Արգարեւ, Որդի Աստուծոյ էր այս մարդը»:

Երբ երեկոյ եղաւ, Յովսէփ Արեմաթացի անունով երեւելի մարդ մը եւ իրեն հետ ուրիշ բարեպաշտ մարդիկ Յիսուսի մարմինը խաչէն վար իջեցուցին եւ դրին քարէ փորուած նոր դերեղմանի մը մէջ: Իսկ հրեաները դերեղմանը կնքեցին ու պահակներ դրին, որ պէտքի սեւէ մէկը դալով Յիսուսի մարմինը չվերցնէր:

### ՄԱՐԿՈՍԻ ՅՈՒԹԻՆՆ

1.- Յիսուսի սերը այնքան շատ էր մեղաւոր մարդկութեան հանդէպ որ անոնց փրկութեան համար սիրայօժար յանձն առաւ խաչին շարժարանները եւ թափեց իր սուրբ արիւնը: Այժմ ով որ Յիսուսի հաւատայ եւ անոր անունով ներում խնդրէ իր մեղքերուն, Աստուած կը ներէ:

2.- Ինչպէս որ Յիսուս գիւժ շարժարողներուն եւ խաչողներուն ներեց, մեռի ալ պարտաւոր եմ ներելու մեզի նեղութիւն պատճառողներուն: Մեր պարտականութիւնն է անոնց համար աղօթել, որպէսզի ամոնք անդրադառնան իրենց մեղքերուն եւ զգումի զան Աստուծոյ առջեւ:

### ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Հրեաներ Յիսուսը ո՞ր պարտէզին մէջ ձերբակալեցին:
- 2) Ո՞ր աշակերտը մատնեց Յիսուսը:
- 3) Պիղատոս որեւէ յանցանք դատ՞ւ Յիսուսի վրայ:
- 4) Յիսուսը ո՞ւր տարին խաչելու համար:
- 5) Յիսուսի երկու կողմերը ուրիշ որո՞նք խաչուեցան:
- 6) Առաջին աւազակը ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 7) Երկրորդ աւազակը ի՞նչ պատասխանեց առաջինին:
- 8) Յիսուս ի՞նչ ըսաւ երկրորդ աւազակին:
- 9) Երբ որ Յիսուս հոգին աւանդեց, ի՞նչ բաներ պատահեցան:
- 10) Յիսուս ինչո՞ւ համար խաչուեցաւ:

### ԳՈՅ ՍՈՐՎ ԵՅՈՒՆԻ

«Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն»: Ղուկ. ԻԳ. 34:

# ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԵՒՈՒՄՆԵՐԸ

(Յովհ. Ի. 19 - 29)

Յիսուս յաճախ իր աշակերտներուն յայտնած էր թէ ինք պիտի չարչարուէր, թաղուէր եւ ապա երրորդ օրը յարութիւն առնէր: Աշակերտները թէեւ մտիկ ըրած էին այս բոլորը, սակայն Յիսուսի չարչարանքներն ու մահը տեսնելով չճամ եւ յուսահատ վիճակի մատնուած էին:

Միաշարթի (Կիրակի) առաւօտը, խումբ մը բարեպաշտ կիներ իւղեր եւ խունկեր առած՝ գերեզման դացին Յիսուսի մարմինը խնկելու համար: Սակայն գերեզմանին մէջ Յիսուսի մարմինը չգտնելով դարձացան: Նոյն միջոցին հրեշտակներ երեւցան իրենց եւ աւետեցին ըսելով. «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Իւզարբեր կիները վախով եւ ապշութեամբ սկսան գերեզմանէն վերադառնալ: Մինչ կը քայլէին, յանկարծ Յիսուս երեւցաւ իրենց եւ գիրենք ողջունեց: Անոնք Յիսուսը իրենց առջեւ տեսնելով Անոր ոտքերուն ինկան եւ երկրպագեցին: Յիսուս ըսաւ անոնց.

– Մի վախնաք, գացէք, ըսէք իմ եղբայրներու (աշակերտներու) որ Գալիլիա երթան, ու հոն զիս պիտի տեսնեն:

Կիները ուրախութեամբ աշակերտներուն քով գացին եւ պատմեցին հրեշտակներու տեսիլը եւ Յիսուսի երեւումը: Սակայն աշակերտները տակաւին չէին կրնար հաւատալ Յիսուսի յարութեան եւ կը կարծէին թէ կիներուն պատմածները աչքի երեւոյթ բաներ են:

Նոյն իրիկունը աշակերտները տան մը մէջ ժողովուած եւ հըրեաներէն վախնալով դռները դոցած էին: Յանկարծ Յիսուս եկաւ ու անոնց մէջտեղ կայնելով ըսաւ.

– Պաղաղութիւն ձեզի:

Աշակերտները դարձացան ու ապշեցան: Յիսուս իր գամուած ձեռքերուն եւ դեղարդով խոցուած կողին տեղերը ցուցուց անոնց որպէսզի տեսնեն ու հաւատան թէ ինք յարութիւն առած է: Ապա անոնց նորէն ըսաւ.

– Պաղաղութիւն ձեզի, ինչպէս Հայրը զիս զրկեց, ես ալ ձեզ կը զրկեմ. գացէք եւ ամբողջ աշխարհի քարոզեցէք:

Աշակերտները Յիսուսը իրենց մէջ տեսնելով ուրախացան: Իրենց մէջէն բացալայ էր Թովմաս առաքեալը: Երբ ան վերադարձաւ, իրեն պատմեցին Յիսուսի երեւումը: Թովմաս ըսաւ անոնց.

– Եթէ իր ձեռքերուն վրայ գամերուն նշանը չտեսնեմ ու մաւրս գամերուն տեղը եւ ձեռքս անոր կողը չխոթեմ, չեմ հաւատար:

Ութ օր ետք Յիսուս դարձեալ երեւցաւ իր աշակերտներուն երբ անոնք դարձեալ դռները դոցած էին:

Յիսուս Թովմասը կանչելով ըսաւ.

– Մատդ հոս բեր. նայէ իմ ձեռքերու ու ձեռքդ բեր եւ իմ կողս խոթէ ու մի ըլլար նմահաւատ, այլ՝ հաւատացեալ:

Թովմաս ըսաւ Յիսուսի.

– Իմ Տէրս ու իմ Աստուածս:

Յիսուս պատասխանեց անոր.

– Որովհետեւ դուն զիս տեսար՝ հաւատացիր. երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան:

## ՆՋՐՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպէս որ Յիսուս մեռնելէն ետք յարութիւն առաւ, այնպէս ալ իրեն հաւատացողները օր մը յարութիւն պիտի առնեն եւ պիտի Մառանգեն. երկինքի արքայութիւնը: Երանելի պիտի ըլլան բոլոր անոնք որոնք առանց տեսնելու կը հաւատան:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուսի աշակերտները ինչո՞ւ համար դռները դոցած էին:
- 2) Յիսուս իր աշակերտներուն երեւնալով ի՞նչ ըսաւ:
- 3) Ո՞ր աշակերտը բացալայ էր Յիսուսի երեւցած ատենը:
- 4) Թովմաս վերջը զարով ի՞նչ ըսաւ:
- 5) Յիսուս երկրորդ անգամ երեւնալով ի՞նչ ըսաւ Թովմասի:
- 6) Թովմաս ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 7) Յիսուս ի՞նչ պատասխանեց Թովմասի:

## ԳՈՑ ՍՈՒՂ ՆՅԵՐԻ

« Երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան » Յովհ. Ի. 29:

# Ի ԾՆԷ ԿԱՂԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

(Գործք Գ., Գ. 1-31)

Պետրոս եւ Յովհաննէս առաքեալները օր մը տաճար դացին ազօթելու: Տաճարին դրան առջեւ նստած էր մուրացկան մը որ ի ծնէ կաղ էր: Այս մարդը երկու առաքեալները տեսնելով անոնցմէ ոչոր-մութիւն խնդրեց: Պետրոս Յովհաննէսի հետ մէկտեղ անոր նայեցաւ եւ ըսաւ.

- Մեզի նայէ:

Կաղ մարդը դէպի անոնց դարձաւ եւ կը յուսար լսան մը տանել:

Պետրոս ըսաւ անոր.

- Արժաթ ու սկի չունի՞մ, հապա ինչ որ ունի՞մ՝ դայն քեզի կուտամ: Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անուճովը ելիր ու քալէ:

Այս ըսելով Պետրոս կաղ մարդուն ձեռքէն բռնելով վերցուց դայն: Իսկոյն անոր ոտքերը զօրացան ու սկսաւ քալել եւ զԱստուած օրհնել: Հոն դանուոյ մարդիկը այս հրաշքը տեսնելով զարմացան ու Պետրոսի եւ Յովհաննէսի շուրջը բոլորուեցան: Պետրոս իր բերանը բացաւ եւ հաւաքուող բազմութեան ըսաւ.

- Ո՛վ իսրայելացի մարդիկ, ինչո՞ւ դարմացեր էք եւ ապշութեամբ մեզի կը նայիք: Այս հրաշքը մենք մեր զօրութիւնով չգործեցինք, այլ ձեր խաչած Յիսուս Քրիստոսով կատարուեցաւ այս բժշկութիւնը: Թէեւ դուք Յիսուս Քրիստոսը խաչեցիք, սակայն Աստուած զԱյն յարուց: Եղբայրներ, դիտե՛մ որ այդ բանը չդիտնալով ըրիք. ուստի սուրջխարեցէք ու դարձի եկէք, որպէսզի ձեր մեղքերը ջնջուին:

Պետրոսի քարոզութիւնը մտիկ ընող բազմութեանն շատ շատեր զղջացին իրենց մեղքերուն համար: Սակայն հրեայ իշխաններն ու քահանաները մրայ հասնելով ձերբակալեցին Պետրոսն ու Յովհաննէսը, եւ յաջորդ օր ատեննի առջեւ հանելով հարցուցին թէ ի՞նչ զօրութիւնով ըրին այդ հրաշքը:

Պետրոս առաքեալ յաջարար խօսեցաւ անոնց թէ այդ հրաշքը կատարած են Յիսուս Քրիստոսի անուճովը: Անոնք այս հրաշքը ի-

մանուլէ ետք հաւատքի գալու տեղ սաստիկ սպառնալիքներ ըրին Պետրոսի եւ Յովհաննէսի որպէսզի անոնք Յիսուս Քրիստոսի մասին չխօսին:

Պետրոս եւ Յովհաննէս ատեննէն դուրս ելլելով գացին միւս առաքեալներուն քով ու պատմեցին պատահած բաները: Բոլոր առաքեալները Աստուծոյ փառք տուին եւ ազօթեցին որ զիրենք Սուրբ Հոգիով զօրացնէ. համարձակօրէն քարոզելու համար:

## ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներու նման մենք ալ մեր կարգին հաւարձակ պետք է ըլլանք ուրիշներուն խօսելու Աստուծոյ խօսքն ու օրէնքները: Իւրաքանչիւր աշակերտի պարտականութիւնը պետք է ըլլայ կիրակնօրեայ Ռարոցին մէջ տրված իր դասերը պատմել ուրիշներուն:

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Պետրոս եւ Յովհաննէս առաքեալները ո՞ւր գացին:
- 2) Տաճարի դրան առջեւ որո՞ւ հանդիպեցան:
- 3) Պետրոս առաքեալ ի՞նչ ըսաւ կաղ մարդուն եւ ի՞նչ ըրաւ:
- 4) Պետրոս առաքեալ ի՞նչ խօսեցաւ հաւաքուող բազմութեան:
- 5) Հրեայ իշխաններն ու քահանաները ո՞ւր տարին Պետրոսն ու Յովհաննէսը:
- 6) Պետրոս եւ Յովհաննէս հրեաներու ատեննէն դուրս ելլելով ո՞ւր գացին:
- 7) Բոլոր առաքեալները կ'ըսէին իմանալով ի՞նչ ըրին:

## ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

« Արժաթ ու սկի չունի՞մ, հապա ինչ որ ունի՞մ՝ դայն քեզի կու տամ. նազովրեցի Յիսուս Քրիստոսի անուճովը ելիր ու քալէ: Գործք Գ. 6:

# ՍՕՂՈՍԻ ԴԱՐՁԸ

(Գործք Թ. 1 - 25)

Սօղոս կամ Սաւուղ անունով մարդ մը կար որ սոսկալի հա-  
կառակորդ մըն էր Յիսուսի հետեւողներուն: Ան կը հաւածէր հաւա-  
տացեալները եւ անոնց մեծ շարիքներ կը հասցնէր:

Օր մըն ուլ հրեաներու քահանայապետին քով գնաց եւ անկէ  
կնքուած հրամանադիր թուղթեր առնելով ճամբայ ելաւ դէպի Դա-  
մասկոս, որպէսզի հոն գտնուող հաւատացեալները ձերբակալելով  
ճրուսադէմ բերէր:

Երբ Դամասկոսի մօտեցած էր, ճամբուն վրայ յանկարծ լոյս  
մը փայլատակեց եւ Յիսուս երեւցաւ իրեն: Սօղոս իսկոյն գետին ին-  
կաւ եւ լսեց ձայն մը որ կ'ըսէր իրեն.

- Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հաւածես զիս:
- Ո՞վ ես դուն, Տէր, ըսաւ Սօղոս:
- Ես եմ Յիսուսը, որոնք դուն կը հաւածես... ըսաւ Տէրը իրեն:

Սօղոս դողով ու ապշութեամբ հարցուց.

- Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ:

Յիսուս ըսաւ իրեն.

- Ելի՛ր ու քաղաքը մտի՛ր եւ թեզի պիտի գրուցուի թէ ինչ պար-

տիս ընել:

Սօղոսին ընկերացող մարդիկը տալամ կեցեր էին: Անոնք  
միայն ձայնը կը լսէին, բայց մէկը չէին տեսներ:

Սօղոս գիտնէն ելաւ ու բաց աչքերով մէկը չէր տեսներ. ուստի  
իր ընկերները ձեռքէն բռնելով զինք Դամասկոս մտցուցին: Սօղոս  
երեք օր կեցաւ տոտնց տեսնելու ու ոչ կերուաւ եւ ոչ ալ խմեց:

Դամասկոսի մէջ Անանիա անունով բարեպաշտ մարդ մը կար:  
Տեսիլքի մէջ Տէրը իրեն ըսաւ.

- Անանիա, ելի՛ր ու գնա այն փողոցը որ Ուղիղ կ'ըսուի. հոն  
փնտռէ Սօղոս անունով մարդ մը եւ անոր վրայ ձեռքդ զի՛ր ու աղօ-

թէ, որպէսզի տեսնէ:  
- Տէր, ըսաւ Անանիա, լսած եմ որ այդ մարդը սրբա՛ն չարիք-  
ներ բրած է քու սուրբերուդ:

- Դուն գնա, վասնզի ան ինձի համար ընտիր անթմբն է, իմ  
անունս հեթանոսներու, թաղաւորներու եւ Եսայիէի սրպիներուն  
առջեւ կրեաւ համար, ըսաւ Տէրը իրեն:

Անանիա Տիրոջ պատուէրին համաձայն գնաց Սօղոսին քով եւ  
անոր վրայ իր ձեռքերը դնելով աղօթեց ու ըսաւ.

- Սաւուղ եղբայր, վեր նայէ. Տէրը զիս դրկեց, այն Յիսուսը  
որ ճամբան քեզի երեւցաւ, որպէսզի տեսութիւնդ ստանաս եւ Սուրբ  
Հոգիով լեցուիս:

Իսկոյն Սօղոսի աչքերէն թեփերու պէս բաներ ինկան եւ սկսաւ  
տեսնել: Ատոր վրայ Սօղոս ելաւ ու մկրտուեցաւ:

Այնուհետեւ Սօղոս սկսաւ Քրիստոսը քարոզել: Չարածիտ  
հրեաներ Սօղոսին փոփոխութիւնը տեսնելով զայրացան եւ ուղեցին  
զայն սպաննել: Բայց բարեպաշտ մարդիկ գիշերով Սօղոսը քաղաքի  
պարիսպներուն վրայէն դամբիւղով մը վար իջեցուցին եւ ճամբեցին:

Հետագային Սօղոս եղաւ մեծ քարոզիչ մը եւ ձեռնադրուելով  
դարձաւ Պօղոս Առաքեալ:

## ՆՁՐԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ

Շատ անգամ մարդիկ Սօղոսի նման կը պայքարին Աստուծոյ  
ծառանքերուն դէմ եւ ներգրծուի կուտան անոնց: Կարծելով որ իրենց  
ըրաժը շիտակ բան մըն է: Որպէս հայ քրիստոնեաներ, գգուշանալու  
ենք նման պայքարներէ, քանի որ Աստուծոյ հաւատացեալներուն նե-  
ղութիւն տալով հալածած կ'ըլլանք Յիսուս Քրիստոսը:

Մեր պարտականութիւնը պէտք է ըլլայ միշտ աղօթել Աստու-  
ծոյ եւ ըսել. «Տէր ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Երբ այսպէս աղօթենք,  
Աստուած մեզի կը ցուցնէ իր նախքան եւ կը սորվեցնէ իր սուրբ -  
րէնգները:

Ով որ Քրիստոսը կը հալածէ եւ անոր ձայնը մտիկ ընելով իր  
չար նախքաներէն չի դառնար, անպատիժ չի մնար:

## ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Սօղոս ինչո՞ւ համար Դամասկոս կ'երթար:
- 2) Ճամբան ո՞վ երեւցաւ իրեն:

- 3) Սօղոսի աչքերը ի՞նչ եղան:
- 4) Յիսուս ի՞նչ ըսաւ Սօղոսի:
- 5) Սօղոս ի՞նչ պատասխանեց Յիսուսի:
- 6) Տէրը տեսիլքի մէջ ի՞նչ ըսաւ Անանիայի:
- 7) Անանիա Սօղոսի քով երթալով ի՞նչ ըսաւ:
- 8) Անանիայի ազօթքէն վերջ Սօղոսի աչքերը ի՞նչ եղան:
- 9) Սօղոս ի՞նչպէս փախաւ Դամասկոսէն:

### ԳՈՑ ՍՈՐՎԵՑՈՒՐ

«Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Գործք Թ. 6:

Լ Գ . Դ Ա Ս

## ԱՐԳԱՐ ԹԱԳԱԽՈՐ

Յիսուսի ժամանակ Եղեսիա քաղաքին մէջ կը նստէր Արգար անունով թագաւոր մը, որ կը տառապէր անբուժելի ցաւերէ: Մարդկային ձեռով հնարուած դեղերը չէին կրցած բուժել անոր ապականուած մարմինին ախտերը:

Օր մը թագաւորին դեսպանները Պաղեստին դացած էին կտրելու պաշտօնով մը: Վերադարձին անոնք Երուսաղէմ մտան Յիսուսը տեսնելու, քանի որ անոնք իմացեր էին անոր սքանչելի գործերուն եւ հրաշքերուն մասին: Դեսպանները Փրկչին հրաշքերուն ահանատես ըլլալէ ետք՝ վերադարձան Եղեսիա ու Արգարի պատմեցին անոր հրաշագործութիւնները:

Թագաւորը այդ բաները իմանալով հաւատաց թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, եւ ըսաւ.

— Կատարուած այդ հրաշքները մարդկային գորութեան արդիւնք չեն կրնար ըլլալ, այլ՝ Աստուծոյ, որովհետեւ մարդոցմէ ոչ ոք կրնայ մեռելները յարուցանել:

Արգար պատգամաւորներ դրկեց Յիսուսին, որպէսզի Ան իր

երկիրը վար եւ զինք բժշկէր: Պատգամաւորներուն հետ միասին ուղարկեց նաեւ նկարիչ մը որ նկարէր Յիսուսի պատկերը եւ իրեն յետէր, եթէ երբեք Ան չյօժարէր իր մօտ գալ: Նամակ մըն ալ յանձնեց անոնց Յիսուսին ուղղուած, որուն մէջ գրուած էր հետեւեալը.—

«Լսած եմ քու մասիդ, եւ նաեւ այն բժշկութիւններու մասին որոնք կը կատարուին քու ձեռքովդ՝ առանց դեղերու եւ արմատներու, որովհետեւ, ինչպէս կը պատմեն, դուն կոյրին տեսողութիւն կուտաս, կաղերը կը քալեցնես, բորտները կը մաքրես, չար սպիները եւ դեւերը կը հանես, եւ տուհաւարակ երկարատեւ հիւանդութիւններէ տառապողները կը բժշկես, եւ նաեւ մեռելները կը կենդանացնես: Երբ քու մասիդ այս ամէն բաները իմացայ, մտածեցի սա երկուքէն մէկը.— կամ դուն Աստուած ես որ երկինքէն իջած՝ այս բաները կ'ընես, եւ կամ թէ դուն Աստուծոյ որդի ըլլալու ես որ այդ բաները կը կատարես: Այս պատճառով Քեզի դրեցի, ազգելով որ նեղութիւն կրես եւ իմ մօտս գաս ու բժշկես իմ ունեցած հիւանդութիւնս: Նաեւ լսեցի թէ հրեաները քեզմէ դժգոհ են եւ կ'ուզեն քեզ չարչարել: Բայց ես փոքրիկ ու դեղեցիկ քաղաք մը ունիմ որ մեր երկուքին ալ կը բաւէ»:

Արգարին դեսպանները Երուսաղէմ երթալով հանդիպեցան Յիսուսի, երբ Ան ուխտանալով Երուսաղէմ կը մտնէր. սակայն չհամարձակեցան ուղղակի Անոր ներկայանալ. այլ Փիլիպպոս եւ Անդրէաս առաքեալներուն հաղորդեցին իրենց թագաւորին խնդրանքը եւ նամակը յանձնեցին:

Յիսուս յանձն չառաւ Արգարին քով երթալ. բայց նամակով մը խոստացաւ Եղեսիա դրկել իր աշակերտներէն մէկը:

Դեսպանները Եղեսիա վերադառնալով, յայտնեցին Արգարին Յիսուսի խոստումը եւ յանձնեցին Յիսուսի կենդանագիր պատկերն ու դրկած նամակը:

Յիսուսի համբարձումէն ետք, անոր աշակերտներէն Թադէոս Եղեսիա դնաց ու բժշկեց Արգար թագաւորը, որ շատ ուրախացաւ եւ մկրտուելով քրիստոնեայ դարձաւ:

Թադէոս ամէն կողմ քարոզեց Յիսուս Քրիստոսի աւետարանը եւ շատ հրաշքներ ու բժշկութիւններ կատարեց: Անոր քարոզութիւնները մտիկ ընելով բազմաթիւ մարդիկ Յիսուս Քրիստոսի հաւատացին եւ մկրտուելով քրիստոնեայ դարձան:

Թադէոս Արդէ անունով մէկը եպսկոպոս ձեռնադրեց Եղե-

սիոյ համար եւ ինք ուրիշ տեղեր գնաց Աւետարանը քարոզելու:

Արգար թագաւոր քրիստոնէութիւնը ընդունելէ ետք նամակներ դրեց Հռոմի կայսեր եւ Ասորիստանի ու պարսից թագաւորներուն: Ան իր նամակներուն մէջ կը դաւանէր Յիսուս Քրիստոսը ու կը յորդորէր զանոնք որ քրիստոնէականներուն ազատութիւն շնորհեն: Մակայն միայն Հռոմի կայսեր ուղղած իր տուածին նամակին պատասխանը ստացաւ. իսկ միւսներուն պատասխանները չստած մեռաւ երեսուն եւ ութ տարի թագաւորելէ ետք:

### ՆԱՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Արգար քագաւորին զօրանք հաւատքն ու բարեպաշտութիւնը օրինակ պէտք է ըլլան բոլոր հայ քրիստոնեաներուն, որպէսզի աւարտ հաւատքով գԱստուած սիրեն ու պաշտեն, նաեւ օգտակար ըլլան իրենց եկեղեցիին ու ազգին:

### ՀԱՐՏՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞ր քաղաքին մէջ կը նստէր Արգար թագաւոր:
- 2) Արգար ինչո՞ւ համար իր քաղաքը հրաւիրեց Յիսուսը:
- 3) Արգար թագաւոր իր նամակին մէջ ի՞նչ գրած էր Յիսուսի:
- 4) Յիսուս եղեսիւմ գնա՞ց:
- 5) Յիսուս ի՞նչ խոստացաւ Արգարի դեսպաններուն:
- 6) Յիսուսի համարձուէն վերջ ո՞վ գնաց եղեսիւմ եւ հոն ի՞նչ ըրաւ:

### ԳՈՑՍՈՒՂՆՅՈՒՐ

«Երկիրպագցեն նմա՛ ամենայն քագաւորք երկրի, եւ ամենայն ազգք ծառայեսցն նմա»: Մարգ. ՀԱ. (ՀԲ.) 11:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	52
Յառաջարան	
Ա. Եզեկիա եւ Սենեքրիմ	3
Բ. Յովնան Մարգարէի Փախուստը	5
Գ. Յովնան Մարգարէի Քարագութիւնը	8
Դ. Երկու Եզբայրները	10
Ե. Աններոզ Ծառան	11
Զ. Անպտուղ Թգեմին	13
է. Բարի Սաւարացին	14
Ը. Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ	16
Թ. Զաւարիայի Աւետումը	18
ժ. Մարիամի Աւետումը	20
ժԱ. Յիսուսի Ծնունդը եւ Մոգերուն Գալուստը	22
ժԲ. Յիսուս Տասներկու Տարեկան	24
ժԳ. Յիսուսի Մկրտութիւնը	26
ժԴ. Յիսուսի Առաջին Հրաշքը	27
ժԵ. Հրաշալի Զկնորսութիւնը	29
ժԶ. Գալիլիացի Բորտին Բժշկութիւնը	31
ժԷ. Տեռատես Կնոջ Բժշկութիւնը	32
ժԸ. Երկու Կոյրերուն Բժշկութիւնը	34
ժԹ. Յիսուս Ծովուն Վրայէն կը Քալէ	35
Ի. Ժլատ եւ Անճնատէր Մեծահարուստը	37
ԻԱ. Զորս Հագարներու Կերակրուիլը	38
ԻԲ. Յիսուսի Այլակերպութիւնը	40
ԻԳ. Տասը Բորտները	41
ԻԴ. Զաւէտի Դարձը	43
ԻԵ. Մարթա եւ Մարիամ	45
ԻԶ. Ղազարոսի Յարութիւնը	46
ԻԷ. Յիսուս իր Աշակերտներուն Ուտերը կը Լուայ	49
ԻԸ. Մուք Հազարդութեան Խորհուրդը	51
ԻԹ. Յիսուսի Խաչելութիւնը	53
Լ. Յիսուսի Յարութիւնն ու Երեսումները	56
ԼԱ. Ի Ծնէ Կազին Բժշկութիւնը	58
ԼԲ. Սօզոսի Դարձը	60
ԼԳ. Արգար Թագաւոր	62